Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

15655

891.99
ग-29

N 420

2003

Հ. Հայտարարություն

891.99
Դ-29

1001
3287

ՍԱՂԳՈՒՌՏ

ԴՇԽՈՅԻ ԵՒ ԿՈՒՍԻ

ՊԱՏԱՐԱԳ

ԳՐԵԱՑ

ՍԵՐՈՒՆԻՆ ԳԱԲՐԻԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

Ի 1875 ՄԱՅԻՍԻ 1

Ի ՍԱՆԿՏ ՊԵՏՐՈՒՐԿ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Բ.Խ. Центральная Библиотека
7/XI-1922
Հանձն. Հանձնաժ.
Ա. ՄՏԱՍՏԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՏՊԵԱԼ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԻԱ Մ. ՏՆՏԵՍԵԱՆԻ ՈՐ Ի ՊԱՀՃԷ—ԳԱԼԱԹԱ

ԷՍԱՍ ԷՖԵՆՏԻ ԽԱՆ ՎԵՐՆԱՑԱՐԿ. ԹԻՒ 13

1876=ՌՅԻԵ

343

Le 15 Mai de 1875. N° 949. Le Censure de St. Petersbourg a ordonné d'imprimer.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Պատկանեան պատուական և պատկառելի Հօր սոյն փոքրիկ պատարագն պատարագի դշխոյին Ս. Սանդխտոյ՝ կը պատարագի յանուն Ամեն. Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հօր՝ յԱզգային գրական սեղանոջ և 'ի զգայուն սիրտս, յորս վառի հուր նուիրական, հուր սիրոյ Ազգին։ Պատարագիս ժամանցն ու յիշէք մատուցանողն է այն ազգասէր Հայկազն, Մեծ. Աղայ Յովսէփ Իզմիրեանցն, որոյ բարերարութեամբ հոգացուած է տեսակիս ծախքը։ Այն ընտիր և ճշմարիտ Ազգասէրն, որ հերու 'ի Մասիս լրագրի հրատարակեց իւր նոր և փառաւոր մէկ խոստումն՝ մրցանակաւորելու ազգային գրագիտաց արժանաւոր գրիչներ, և որոյ առաջին բարեաց հանդիպեցաւ իմ անարժանութիւնս։ Առ որ կը մնամ շնորհապարտ, մինչև փոխարինեմ իւր շնորհաց նորանուէր ընծայիւք։

Արդարև իմաստունն Իզմիրեանց իւր և ծնողաց հոգւոյն պաշտօն ու պատարագ ընել տալուն գեղեցիկ միջոց ընտրած է։ Որպիսի է ներկայս։

Պատարագեալն՝ Ս. Կոյսն Սանդուխտ, ծաղիկն Շաւարշանայ, ծիրանածին եղնիկն, հաճոյացեալն երկնից, նախանձելին հրեշտակաց, հարսնացեալն Քրիստոսի, փառք ու պսակն Եկեղեցւոյս Հայաստանեայց։

Պատարագիչն քահանայ. քահանայ ոչ միայն ըստ կարգի Ահարոնեան և Մելքիսեդեկի օրինակին Քրիստոսի, քահանայ ոչ միայն փրկարար խորհրդոյն մատուցանող, աղօթող և խունկ արկանող, այլև աւետարանող, ուսուցանող, սիրտն 'ի գիր՝ և գիր 'ի սիրտ հարկանող. Հայկական խսկական Եկեղեցւոյն, ազգի և ժողովրդեան հաւատոյ և սիրոյ

բուրվառաւ խնկարկու. և հոգւով և քնարիւ լուսաւորող, զարթուցանող և առաջնորդող։ Որ թէպէտ փիլոն չկրեր... բայց նկարէն շուրջառ օծման սուրբ Հոգւոյն շուրջ զանձամբ պատեալ է ծալ 'ի ծալ ոսկեհիւսեալ։

Ահա ինքն 'ի Սանդուխտ, կամ Սանդուխտն 'ի նմա։ Քանի՞ վեմ կ'աղօթէ. ի՞նչ քաղցր կը բուրէ սրտին կնդրուկն առ Յիսուս. ի՞նչ հիանալի և երկնային ըղձիւք լի փափագներ աստուածասիրի մը. ի՞նչ բարի և երանելի երաշներ աղգասիրի մը. ի՞նչ գորովանք և դուրթ՝ ծնեալ և ծնող եղողի մը. ի՞նչ գողտրիկ վարմունք՝ ընտանեաց ճաշակ ունեցողի մը. ի՞նչ ներհուն հմտութիւն և խորհրդածութիւն պատմութեան և քաղաքականութեան, զոր կը ցուցընէ 'ի դեր Սանատրուկին և 'ի պատասխանիս կոյս Օրիորդին։ Իսկ ընդհակառակն՝ ի՞նչ բիրտ և կամակոր բարք մը կուտայ շահադէտ և խաբող սուտ քահանայի մը, փայտ կոտրող յանտառի անտառաբարոյ քարսիրտ քուրմ Քարճամին։

Սանդուխտ՝ երկօրէական յօրինուածք մի է 75 ամեայ ծերունւոյ, որոյ կորովը սակայն առոյգ է տակաւին և զգացմունք դալարի։ Երեք տեսարակի բաժանեալ է. սմա պիտի յաջորդէ «Սանդուխտ դշխոյի հօր Սանատրկոյ մահն». և ապա երրորդն «Սանդուխտ դշխոյի եղբօր մանկանն Արտաշէսի աղատութիւն։»

Պատարագիս Հեղինակն՝ և Բարերարն նպատակ ունին իբրև հոգւոյ ճաշ կամ պատարագի հաց տարածել զայս ազգային մանկտւոյն, ինչպէս որ նշանակած են կանխաւ ցուցակաւ. և որպէս զի իրենց համեստութիւն չվշտանայ, ոչինչ աւելի քան զայս կ'ըսենք։

16 Մարտ 1876 Ս. Գ. Վ.

Կ. Պոլիս

Գինը կը նշանակուի 10 ղուրուշ միայն կարող գնորդաց համար։

ՆՈՐԻՆ

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՕԾՈՒԹԵԱՆ

ՏԱՃԱՌՈՒԹԵՆ ԵՒ ԳՈՐՈՎՈՒԹԻՒՆ

ԱՌԱՔԵԼԱՇԱՒԻՂ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ ԱԶԳԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

ԵՒ ՀԱՄԱԿ ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

Ի ՆՇԱՆ ՅԱՐԳՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՆՈՒԻՐԷ

ԾԵՐՈՒՆԻՆ ԳԱԲՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՍԱՆԴՈՒԽՏ ԴՇԽՈՅԻ

ՊԱՏԱՐԱԳ

ՍԱՆԱՏՐՈՒԿ Աբբայ Հայոց Աբշակունի՝ քեռորդի Աբգարու։
ՆՈՆՈՓԱՐ Թագուհի Սանատրկոյ՝ դուստր Աբբային Ալանաց։
ՍԱՆԴՈՒԽՏ Դշխոյ՝ դուստր Աբբային Սանատրկոյ՝ կուսան։
ՍՄԲԱՏ Ասպետ Թագաղիր Աբբայի՝ Բագրատունեաց նահապետ՝ քսանամեայ պատանի։
ՍԵՆԵՔԵՐԻՄ՝ նահապետ Արծրունեաց՝ ծերունի, բարեկամ Աբբայի։
ՎԱՐԴԱՆՈՑՇ՝ դուստր ընձակոյ նահապետին Մամիկոնեաց՝ օրիորդ ընկերակից Սանդխտոյ Դշխոյին։
ՔԱՐՁԱՄ Քրմապետ Վահունի։
ՍԵՆԵԿԱՊԵՏՔ, ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ, ՔՈՒՐՄՔ ԵՎ ԴԱՀԻՃ։

Այս անցքն անցանեն ի Շաւարշան, յամի Տեառն 46։

ՎԱՐԱԳՈՅՐ ԱՌԱՋԻՆ

ՅԵՂԱՆԱԿ Ա.

(Տեսարանն ցուցանէ Սանատրուկ Թագաւորի Դահլիճն զարդարած, ուր ինքն Հայոց Աբբայն նստած կայ գահաւոր, այլ՝ տրտում։ Ընդ աջմէ նորա Թագուհին Նոնոփար, և Դշխոյն Սանդուխտ, և Վարդանոյշ. և յահեկէն՝ Մբատ Ասպետ Թագադիր, և Սենեքերիմ, և Քրմապետն։ Աբբայն խօսի Սենեքերիմայ հետ հանդարտ յայնմամ՝ է լսեր ամենեցուն։)

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Ո՛Ր օր այն ծեր Հրէայ Թագէոսն ինձ այնքան սքրտնեղութեան առիթ տուեց՝ մինչ բարկութիւնս չարժեց, և ես նորա կենաց և մեր Աստուածոյ հայհոյութեանց միանգամայն վերջ դրի, կարծում եմ՝ թէ մէկ մթագին վարագոյր տարածվեցաւ սրտիս վերայ, որով ամենայն ինչ աչքումս սեւ է երեւում։ Մէկ վատ ապագայի եմ սպասում։

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Քեզ՝ քա՛ջդ արանց՝ է՞ր պիտի այդպիսի մառախլապատ խորհուրդներ մերձենան. ո՛չ արտաքուստ ունիս թշնամիներէդ երկիւղի տեղ, որովհետեւ Հռոմայեցւոց արծիւներն թեւատարած հովանի են քո թագաւորութեան, և ո՛չ ի ներքուստ՝ քո ժողովրդեան մէջէն՝ դաւաճանութեան կասկածի պատճառ ունիս, որովհետեւ ամենայն առաւօտ և երեկոյ քո հպատակներն՝ քո առողջութեան և յաջողութեան անուամբ՝ ճոխ դահանունք են դնում Հայաստանի Պաշտպան Անահիտ Աստուածուհւոյ սեղանի վերայ։

ՍԱՆԴՈՒԽՏ (Զոհաբերեալ.)

Եթէ իմ Սիրական Տիրանազարդ Տնողին այդ խօսքերով չյօժարէիր ազատութիւն դուշակել, ես պիտի լռէի՝ որպէս անհարմնացեալ աղջիկ. բայց՝ որպէս Հայ Օրիորդ, որպէս Դշխոյ, որպէս Դուստր Հայոց Թագաւորի, որպէս Զաւակ Տիգրանուհեայ, ներեցէ՛ք ինձ, որ հարկադրուած եմ խօսիլ. ուրեմն՝ մեծ թշուառութեան է հասած թէ՛ Աղգն և թէ Երկիրն, որ նոցա անվտանգ և անարկեւան մնալն՝ կախեալ կայ Հռոմէական արծիւներէն, և Անահտայ սեղան դրած պատարագներէն։ Եթէ մի օր այն Հռոմայ արծիւներն կամենան Հայոց Աղգի աչքերն հանել մագիլներով, կամ Երկիրն ծուատել ճանկերով, ո՞վ և ի՞նչ պիտի լինի մեզ պաշտպան նոցա ճիրաններէն։ (Ասաց և բաջին ելաւ շտապով և ինաց արտաքս Դահլիճն։)

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Զարմացմամբ նայելով նորա յետևէն.)

Իմաստո՛ւն և հանճարե՛ղ Դատրիկս։ Սե՛նեքերիմ, հրամա՛ն է քեզ, ասա՛՝ ի՞նչ պատասխան պիտի տայիր՝ թէ Սանդուխտ մնայր Դիւանումն. կամ թէ այժմ ի՞նչ լուծումն ունիս տալ այն խօսքերուն՝ ինչ Դշխոյն ասաց. ասա՛ համարձակ, և մի՛ երկնչիր։

ՍԵՆԵՔԵՐԻՄ (Լի ամօթով.)

Ա՛ռքայ՝ յաւիտեա՛ն կեաց։ Եթէ ես խելամտած լինէի Դշխոյի գաղափարներուն յառաջագոյն, Քո Վեհափառութեան թախիծն չէի հայթհայթեր այն խօսքերով փարատել։ Ի՞նչ պատասխան տամ յայտնի ճշմարտութեան։ Ցոյժ քաջայայտ է արդէն՝ որ Հռոմայեցւոց արծուեաց հովանին մեզ այնքան է պաշտպան, որքան Կիլիկիոյ փապարն Ողիսեայ և ընկերաց. մեծագոյն շնորհն այն է մեզ, որ քան զամենն յետոյ պիտի ուտէ։ Հռոմայեցւոց հովանին մեզ այնքան չէ պաշտպանում արեւու հրատագնապ խորշակէն, որքան մեր աչքերէն ծածկում է արեգական լոյսն, և մեզ չէ թոյլ տալիս տեսնել մեր խղճալի վիճակն։

ԳՐՄԱՊԵՏ (Զեռքն վեր տրած.)

Ո՛չ այդպէս՝ Քաջալանչ Իշխանդ Արծրունեաց։ Դշխոյն Սանդուխտ քո քաղցր և զգօն բանի կէսն միայն հերքեց, իսկ միւս կէսն թողեց անպատասխան։ Հայաստանի պաշտպան Աստուածուհին Անահիտ, որպէս բաւական է ներքին դարանակալներու չար խորհուրդն խափանել, նոյնպէս կարող է արտաքուստ սպառնացած վտանգներն մերժել մեր Աղգէն և Երկրէն, և չթողուլ կարօտ Հռոմայեցւոց օգնութեան։ Դշխոյն Սանդուխտ այս չասա՛ց։

ՎԱՐԴԱՆՈՑՇ

Քեզ անվայելո՛ւչ է՝ Տերդ Քարձամ՝ կասկածելի առնել Դշխոյի անարատ և անբիծ գաղափարն։ Նա այնքանին միայն կամեցաւ տալ պատասխան, դու է՞ր ես Անահիտ Աստուածուհւոյ անունն մէջ բերում։ Է՞ր և դու Անահտի սեղանումն չես շարում հաճոյական պատարագներ, որ Արքայի մոատանջութեան մեայն փարատվի։ Արքայն իւր տրտմութեան աղագաւ խօսեցաւ, դու է՞ր կրօնական խընդիր յարուցիր։

ԳՐՄԱՊԵՏ

Ես այն պատճառաւ Անահիտ Աստուածուհւոյ անունն յիշեցի, որովհետեւ Դշխոյն Սանդուխտ՝ Սենեքերիմ իշխանի բերանի մէջ պատասխանն՝ որ պիտի Աստուածուհւոյ փառքն աւելցընէր, կապեց և կաշկանդեց։

ՍՄԲԱՏ

Ուրեմն դո՛ւ ես՝ ո՞վ Տեր Գրմապետ, կամեցար Դշխոյի լեզուն կաշկանդել. ի՞նչ էր շարժառիթն՝ որ այնքան սրտերանդն մտերմութեամբ պաշտպան հանդիսացար Արծրունեաց Իշխանին։

ԳՐՄԱՊԵՏ

Արծրունեաց Իշխանն կարօտ չէր իմ պաշտպանութեան, ես միայն ճշմարտութեան կամեցայ լինել պաշտպան։

ՎԱՐԴԱՆՈՅՇ

Ճշմարտութենէն շատ հեռի է.՝ Հայր Քարձամ՝ և՛ դու, և՛ քո դիտաւորութիւնն, և՛ քո բանն՝ բոլորովին զուրկ է ճշմարտութենէ՝ ո՛վ անձնահրաւէր ցատագով ճշմարտութեան։ Արծրունեաց Տան Նահապետի զուարթածաղիկ որդին չի՛ փեսայանար պիտականուն Վահունեաց, և յիւր հարսնութեան չի՛ հրաւիրեր՝ քրմաց զոհից ամուճներով պարարեալ օրիորդն։ Թէ սիրող և հետամուտ ես ճշմարտութեան, ահա՛ քեզ դիւրագին և ձրի ինձմէն քեզ նուիրեալ՝ անժխտելի ճշմարտութիւն։ (Քրմապետն Ղողէց է՝ բարձն և բարկոնեամբ էլ արդարս է դահլիճն։)

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Զոհաբերեալ.)

Դո՛ւ Վարդանոյշ՝ ուստի՞ գիտէիր այդ գաղտնիքն, թէ Քրմապետն կամենումէ իւր դուստրն տալ ի հարսնութիւն Սենեքերիմայ որդւոյն Դերենիկին՝ որ իմ Զինակրաց մէջէն քան զամենն աւելի սիրելի է ինձ։

ՎԱՐԴԱՆՈՅՇ

Ա՛յդպէս՝ ո՛ղջ լեր ի պարծանս Հայաստանի. երբ Մեծուհիք և Տիկնայք Հայոց ժողովվում են Թագուհւոյ Դահլիճն, Հայաստանի ամենայն անկիւնների ծածուկ անցքերն խօսվում են այն Տիկնանց ակումբի մէջ, և մենք ևս՝ որպէս Դշխոյն Սանդուխտ, նոյնպէս և ես լսում ենք և իմանում ենք այդպիսի հրեշաւոր գաղտնիքն։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Ա՛ Թոքոհին.)

Զարմանալի կին ես՝ Տի՛կին Նոնոփար, որ ինձ ասած չես, և ես ուստեք լսած չեմ այդ լուրն՝ թէ Քարձամ կամենում է խնամենալ Սենեքերիմ Իշխանի հետ։

ՆՈՆՈՓԱՐ (Ժպտանօք.)

Յաւիտեա՛ն կեաց՝ Տէր իմ Արքայ ամուսին, թէ հնարաւոր ինչ լիներ, և կարծիք ունենայի՝ թէ յուսալի է՝ որ ե՞րբ և իցէ՝ այդ խնամութիւնն գլուխ գայ, դուցէ՝ թէ միտք

գայր, և քեզ ևս ասէի. բայց որովհետև գիտեմ՝ որ ինչպէս ես չեմ փոխուիր ի վերտասանամեայ օրիորդ, նոյնպէս և Արծրունիք ցայն կէտ չեն իւրեանց վերհանձնութիւնն անտես առներ, և չեն ստորնանար՝ որ քրմաց տանէն հարսն առնուն, վասն այն՝ ո՛չ միտքս եկաւ, և ո՛չ քեզ հաղորդեցի։ (Սանդուխտ վերադարձն եկաւ, և պետնելով իւր հօր երեսն ցուցուցի՝ որպէս նորա յիւր բարձի։)

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Ա՛ Սանդուխտ.)

Գանկատ ունիմ քեզ Դշխոյ՝ քո ընկերակից Վարդանուշէն, որ մեր խեղճ Քրմապետին թոյլ չտուաց անգորը բաղմած մնալ իւր բարձի վերայ, այնքան շանթիկներ գլորեց նորա տակն, որ սղորմելին բռնադատվեցաւ փախչիլ Դիւանէն։

ՍԱՆԴՈՒԽՏ (Ժպտալով և ելնելով շարժելով.)

Ա՛յ անիրաւ Վարդանոյշ։ Արքայ Հայրիկ՝ պէտք չէ՞ Վարդանուշին ներել, ի պատիժ նորա յանցանաց հա՛րկ է նորա Օրերդ անունն ընդ փոյթ հաս փոխել։ Քարձամ Հայրին՝ ի՞նչ կամիս ասա՛, փոյթ չէ, կեռասի նման կուլ կուտայ. միայն Սենեքերիմ Նահապետի հետ ցանկացած խնամութեան ակնարկութիւն մի՛ աներ։ Թէ այդ՝ զոհադարձութեան ժամանակն իսկ անգամ պատահի՝ կերբերոսէն աւելի կ՚զայրանայ, և եթէ ինքն Անահիտ Աստուածուհին արդէն երևում լինի ողջակիզաց ճենճերի և խնկոց ծուխի մէջ, կ՚թողնի Սեղանն և Տաճարն և Պատարագն և ամեն կրօնական խորհրդական ծէսերն՝ թերակատար, և կը փախչի։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Մեծայոյն ծիծաղելով, որոմ ամենեւեան եղեն ծիծաղակից.)

Ա՛յդ՝ դո՞ւ ևս գիտես եղել է, Դստրիկ և ինձ ասած չէք՝ ո՛չ մայրդ և ո՛չ դու։ Միայն ես եմ մնացել ձեր մէջ՝ որ այդ չգիտէի։

ՍՄԲԱՏ (Նոյնպէս ծիծաղելով.)

Ա՛ր քայ՝ յաւիտեա՛ն կեաց, թէ Դու չգիտէիր այդ՝ տակաւին մեծ կորուստ չէր, այլ մեծ կորուստ այն էր մեր

աղաղաւ, որ մենք չգիտէինք՝ թէ այս համբաւն կարէր քեզ մխիթարութիւն լինիլ։ Մենք ուստի՞ պիտի իմանայինք, թէ Սենեքերիմ Իշխանի հետ քարձամ քրմապետի խնամութեան լուրն քո թախծանաց պիտի փարատուն բերէ. քանի՞ ժամանակ էր՝ որ մենք քո երեսն այդպէս ուրախ տեսած չէինք։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Որովհետև այս ուրախութիւնն Հայաստանի համար բերեց Ամատունեաց Նահապետի դուստրն՝ Դշխոյն Վարդանոյշ, և Դշխոյն Սանդուխտ՝ նորա պատիժ դատակնքեց ՀԱՐՍՆՈՒԹԻՒՆՆ, վասն որոյ նա թէ կամի՝ պատիժ համարի, թէ կամի՝ պատիւ, ես կամենում եմ հրաւէր առնել նորան ի հարսնութիւն իմ Դերենիկ որդւոյս, և եթէ նա ինքն ևս յօժա՛ր է, թող երթայ Արքայի դարշապարն համբուրէ, և ապա գայ ինձմէն նշանի մատանին առնու։

ՍԱՆԴՈՒԽՏ (Տեղէն ոտքեա՛ .)

Արքայի դարշապարն ես կ՚համբուրեմ, դու՝ Սենեքերիմ Իշխան՝ մատանին պատրաստ պահէ. (Ասոց և Վարդանուշին յեռանէն բռնած տարեց դէպ ՝ Աբ։ոյն։)

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Գնէլ։ եարէ երկոցունց գոնգամոն .)

Շնորհաւորեմ քո հարսնախօսութիւնն, Վարդանոյշ. այսուհետեւ Սանդուխտս պիտի մնայ միայնակ։

ՍԱՆԴՈՒԽՏ (Բռնա՛ առնելով ունին .)

Սանդուխտի ևս Հարսանիքն հեռի չեն։

ՆՈՆՈՓԱՐ

Աշխարհի մէջ չկայ այնպիսի սովորութիւն, որ մէկ օրիորդի պատճառաւ, միւսն ծոմ պահելով՝ մնայ անհարսնացեալ։ (Ա՛յ ասոց, բռնեց Վարդանուշի յեռանէն և տարաւ Սենեքերիմի մօտ։)

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

(Համբուրեց Վարդանուշին և մատանին տուաւ թագուհոյն .)

Այս օ՞րքան մեծ բարեբաղդութիւն է Արծրունեաց,

որ Սանդուխտ Դշխոյի ընկերակիցն պիտի այն տանն հարսնանայ, և Հայոց մեծաց Տիկինն է հարսնածու։

ՍԱՆԱՏՐՈՒԿ և ՆՈՆՈՓԱՐ (Մատանին ուշադրութեամբ.)

Շնորհաւո՛ր լիցի։ Շնորհաւո՛ր լիցի։

ՍԱՆԴՈՒԽՏ (Համբոյր տալով Վարդանուշին .)

Շնորհաւորեմ քո հարսնախօսութիւնն և հարսնութիւնն՝ սիրելի քոյր իմ Վարդանոյշ։

ՎԱՐԴԱՆՈՅՇ (Զկոյ ասելու փոքրցա՛ ընելա՛ .)

Քո՛յր իմ Դշխոյ. (Ե՛ ասրուար կանենցա՛ երկոցունց ուշերին .)

ՅԵՂԱՆԱԿ Բ.

(Տեսարանն ցուցանէ դարձեալ նոյն Դահլիճն, ուր կան ամենեքին ըստ առաջնոյն՝ բաց է քրմապետն, և փոխանակ նորա այժմ կայ եշխանարքին Դերենիկ է ընդդէմ Զինակրութեան, և առընթեր նորա Հարան է։)

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Զարմացեալ .)

Քրմապետն քարձամ միւսանգամ չդարձաւ, երեւի՝ թէ շատ է բարկացել։

ՆՈՆՈՓԱՐ

Ի՞նչ բարկանալոյ առիթ ունէր. նա է՞ր պիտի համարձակէր Սանդուխտ Դշխոյի բանն այս կողմ կամ այն կողմ քարշել և ձգձգել։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Իրա՛ւ՝ հրաւիրենք՝ որ դայ քարձամ, տեսնենք քինթն ու բերանն ի՞նչ կ՚շինէ, երբ իմանայ Վարդանուշի նշանախօսութիւնն։

ՍԱՆԴՈՒԽՏ (Ամբոխեալ.)

Քրմապետն առանց հրաւիրանաց ևս կուգայ վրէժ պահանջելոյ աղաղաւ. քան թէ նորա քինթն ու բերանն նայինք, լաւն այն չէ՞՝ որ Դերենիկի և Վարդանուշի հրճուանքն նայինք։ Ա՛ր քայ Հայրիկ, թէպէտ իրաւունք չէ այլոց դաղտ-

նիք՝ մերկապարանաց կայուցանել, բայց իմ սիրելի քեռ-
վարդանուշի բարեբաստութիւնն ինձ հարկ է դնում ճշմա-
րիտն խոստովանիլ, թէ շատ ժամանակ էր՝ որ այդ երկու
սրտերն միմեանց հետ կապուած էին աննիւթ պարանաւ,
և իրերացմէ հեռու էին մնացել։

ՆՈՆՈՓԱՐ

Ապա ինձ էր չէիք ասում, որ ես շուտ միաւորէի։

ՍԱՆԴՈՒԽՏ

Ո՛չ Դերենիկն էր շտապում, Տիկին Մայր, և ո՛չ Վար-
դանոյշն ճեպեց. ամենայն բարեաց Տնօրինողն երբ կամեցաւ՝
հեռաւորներն մերձաւոր արաւ, և բաժանեալներն միաւորեց։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Նոմոմ.)

Այն ամենայն բարեաց Տնօրինողն արդեօք քեզ ևս այս-
պէս պիտի հասուցանէ՞ իւր օգնութիւնն, որ քեզ ևս հա-
ճոյանայ մի վեսայ, և ես արժանանամ տեսանել քո
հարսնութիւնն։

ՍԱՆԴՈՒԽՏ (Ամբոխեալ.)

Ո՛չ ապաքէն կանխաւ ասացի, թէ հեռի չեն և իմ
Հարսանիքն։ Քաջայոյս եմ՝ թագաւորդեա՛լ Հայրիկ իմ Աբ-
քայ, որ չի յամեր, չի յապաղեր այն Օրն՝ ինձ առաւել քան
զամենայն ինչ ըղձալի։ Էր ես ամաչարում։

ՆՈՆՈՓԱՐ (Քանդարելով.)

Միթէ շա՞տ դուստր ունին՝ Տէր իմ Աբքայ, որ շտա-
պում ես սորա հարսնութեան համար. հարցանենք Ամա-
տունեաց Նահապետի Տիկնոջն՝ թէ շա՞տ ուրախ է այժմ,
որ մենք՝ առանց նորա գիտութեան՝ նորա դուստրն հարս-
նացուցինք։ Հօր համար ցանկալի է վեսայ ունենալ, բայց
մօր սրտին ցա՛ւ է դստեր քաղցրութենէն զրկուիլն։ Երբ
հարսնանում է դուստրն՝ մայրն որպէս թէ մնում է որբ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Ցանցէ.)

Այդ հանդամանքն միթէ չգիտէ՞ Քարձամ՝ որ այնքան
թեւակոխում էր իւր դուստրն հարսնացուցանել։

ՆՈՆՈՓԱՐ

Էր պիտի չիմանայ, ի՞նչ դժուարաւ գիտենալոյ ա-
ռարկայ է։

ՍՄԲԱՏ

Նորա ցանկալին այն էր՝ որ իւր դուստրն ոտքն դնէ
Արծրունեաց տան շեմն։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Միթէ այդքան անարժա՞ն են վահունիք։

ՆՈՆՈՓԱՐ

Վահունիք երբէք անարժան չեն. այլ չկայ ոք Հայաս-
տանի մէջ՝ որ հաւատայ՝ թէ Քարձամ Վահունեաց ցեղէն
է սերեալ. քրմերն առ հասարակ իւրեանց անձն Վահունի
են կոչում. բայց Աղդն անվրէպ գիտէ՝ որ Վահունեաց սե-
րունդն վա՛ղ է ոսպառել։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Զարմացեալ.)

Վարդանոյշն ի՞նչ հակառակութիւն ունէր Քարձամի
դէմ։ (Ցեռ դարձ առ Օնոփրէ.) Վա՛ղդանոյշ, ճշմարիտն ասա՛,
էր այնքան ուժգին զդիմի հարար մեր Քրմապետ Մերոյն։

ՎԱՐԴԱՆՈՅՇ (Զարմացեալ.)

Նա աւելի ուժգին էր կամենում զդիմի հարկանել
Դշխոյին՝ Աբքայ Հղօր, ո՛ղջ լեր. երբ Դշխոյն գնաց՝ յար-
ձակեցաւ նորա պատասխանելոյ վերայ, ես իմ Դշխոյ Տի-
բուհոյս և Քեռս պաշտպան կանգնեցայ, և չեմ զղջում.
նա այնքան պիտի երկարացներ բանակռիւն՝ մինչև . . . .

ՍԱՆԴՈՒԽՏ

Ափսո՛ս՝ որ ես չլսեցի նորա ասածներն . . . . .

ՆՈՆՈՓԱՐ

Բաւական է. այժմ փոքր ինչ այլ առարկայի վերայ
խօսեցէք։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Ապա Վարդանոյշ ի՞նչ խօսքի դէմ ասաց, թէ դու էր չես պատարագօք քաղցրացնում Անահիտի սիրան որ Արքայի սրտէն թախիծն մերժէ։

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Ո՛ր ժամանակ Քրմապետն այնքան փառաւորեց Աստուածուհւոյ կարողութիւնն, Վարդանոյշ հարսնս այդ ասաց, և կարի յոյժ յարմարապէս։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Աներկբայ եմ՝ որ Վարդանոյշն ճշմարիտ է ասել. նա Քրմապետ է, և աւելի քան զմեզ զամենեսեանս մերձ է Աստուածոց, և իմ դռնէն այնքան օգուտ է քաղում. է՞ր չէր ասում ինձ՝ թէ քո տրտմութեան միջոցն դիմէ՛ առ Աստուածուհին, և ինքն ևս չէր միջնորդում՝ որ այնքան զօրաւոր Աստուածուհին ինձ սիրտ ինքն չնորհէր։

ՍԱՆԴՈՒԽՏ

Հա՛յրիկ Արքայ, Քուրմերն և Քրմապետներն աւելի լաւ են հասկանում իւրեանց առ երեսս պաշտած, և մեզ պաշտել տուած Աստուածներու և Աստուածուհիներու զօրութիւնն, վասն որոյ՝ ինչ մեզ պաշտել են տալիս, ինքեանք ո՛չ թէ միայն չեն հաւատում և ի սրտէ չեն պաշտում, այլ և մտքերի մէջ ծաղր են անում, և մեզ վերայ ծիծաղում են, որ մենք կամաւ կուրութիւն վրաներս առնելով՝ յիմարանում ենք և խաբվում, և ձեռագործ դրօշեալներուն երկրպագութիւն ենք տալիս։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Գ.ԺՊՇՆԵԼ.)

Դրօշեալներն միշտ ձեռագործ են լինում. ո՞վ է տեսել երկինքէն անձրևի հետ եկած դրօշեալ. ապա ո՞ւմ պիտի երկրպագութիւն տանք՝ թէ որ դրօշեալներուն չտանք։

ՍԱՆԴՈՒԽՏ

Է՞ր ես այդպէս ասում՝ Ա՛ր.քայ Հայրիկ, լսած չե՞ս Գալատիոնի համար՝ որ ասել են թէ երկինքէն է իջած։ (Ճշմարտ.)

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Իրաւ ասացիր՝ Դստրի՛կ, այլ արձաններն՝ ինչպէս պատմութիւնքն են վկայում՝ անդրիադարձքն են կոփել. այն ի՞նչ կ՝նշանակէր՝ որ այն մեկի համար ասացին՝ թէ երկինքէն է եկել։

ՍԱՆԴՈՒԽՏ

Երկինքէն եկած արձան չկայ և չի՛լինիր՝ Հա՛յր իմ Արքայ, բանաստեղծութիւնն է հնարել, և դիտաւորութիւնն ո՛չ թէ միայն բարի է եղել, այլ և մեծ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՏ է պարունակել։ Անդրիադարձներն՝ փող վաստակելոյ նպատակաւ քարէն, փայտէն, պղնձէն, արծաթէն, փղոսկրէն, սատափէն, ոսկիէն կուռքեր էին դրոշմում, մարգարիտներով և գոհար ակներով զարդարում, խաբեբայ քուրմերն այն անշունչ անշարժ դիակների վերայ Աստուծոյ պաշտելի անունն էին դրոշմում, և յիմարներին պաշտել էին տալիս՝ մինչ ինքեանք չէին բնաւ պաշտում. խաբուած բարեպաշտ և կրօնասէր մարդիկ՝ այն սուտ Աստուածներու համար տաճարներ էին շինում, այն տաճարների մէջ սպասաւոր քուրմեր էին դնում, իսկ քուրմերն իւրեանց ապրուստի ճանապարհ էին շինում այն դրօշեալներն և այն տաճարներն, և միամիտներուն մոլորութեան առիթ դառնում։ Այն սուտ Աստուածներէն չէի՞ն այն արձաններն, որ Մեծին Վաղարշակի թոռն Արտաշէս՝ նախնիի նման բերեց Յունաստանէն։

ՎԱՐԴԱՆՈՅՇ (ԸՆԴՀՈՒԵԼ.)

Դու ինձ ասել էիր՝ Դչխոյ քուրիկ, թէ կուռքեր շինելով՝ քար տաշելոյ արհեստն, անդրիադարձութիւնն և նկարչութիւնն ծագեցաւ աշխարհի երեսին. տաճարնե՛ր շինելով՝ ճարտարապետութիւնն ծաղկեցաւ, և նորանով՝ մեծ մեծ ապարանները, բարձրաբերձ պարիսպներ և անառիկ բերդեր կառուցանելն առաջացաւ. կռոց պաշտօնի վայելչութեան համար՝ քուրմերի յօրինած նուագներն երգելով կամ բարձր ձայնով դովասանքների դարձածութեամբ տաճարների մէջ՝ ճարտարախօսութիւնն, երաժշտութիւնն և բանաստեղծու-

թիւնն ստեղնեցաւ և տարածուեցաւ, և ժողովուրդն՝ որ Իրանայ կամ Արամայեցւոց խորշերէն ելած բաղում ժամանակ թափառական շրջել էր մոլորեալ, այս աշխարհ գաղթելոյ միջոցին բերել էր ընդ իւր միայն բիրտ և ոտոր անտաշութիւն, սկսաւ փոքր առ փոքր իւր վայրենութեան վիճակէն ելանել, և Տաճարների մէջ միշտ համախմբելով, միմեանց հետ անդադար տեսակցութիւն անելով, ծանօթութիւն, բարեկամութիւն, սէր և մարդասէրել վարք ու բարք ստանալով, և քրմաց բերանէն շահեկան գաղափարներ լսելով, և արտաքուստ պարկեշտ և համեստ ընթացք տեսանելով անընդհատ, որովհետև բաղմութեան առջևն չէին կարող այլ ազգ խօսիլ, կամ գործել, մանաւանդ որ փութով Տիգրան և Տիգրանուհի գտնվեցան արանց և կանանց պարագլուխ, Հայութիւնն մեծ օգուտ քաղեց հանգամանքէն։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Ես ևս այդպէս եմ լսել մեր ծերերէն, և խելքիս ևս շատ մօտ է։

ՍԱՆԴՈՒԽՏ

Այդ իսկ էր իմ կանխաւ ասած ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՏՆ, որ Բանաստեղծութեան մէջ էր պարունակուած։ Եթէ Քուրմերն ճանաչէին իւրեանց պաշտօնի յարգն և նպատակն, եթէ կամենային միայն հաւատարիմ այն պայմանին որոյ վերայ արդէն ոտն հաստատել էին կամ դիպուածոյ բերմամբ, կամ Երկնային Նախախնամութեան տնօրէնութեամբ . . .

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Մարդիկ դեռ այն պարզմտութեան մէջ երկար կ՚միային.

ՍԱՆԴՈՒԽՏ

Այլ Ազգային՝ աննպատակ՝ ըստ բաղդի բերման ուղղութիւնն պիտի պսակաւորվէր, այն բարի սերմունքն պիտի բարի պտուղներ տային, պիտի օգնէին Ազգին շուտով աչք բանալ, ոչ Պարսից ձեռին՝ Կիւրոսէն որպէս ժառանգութիւն միայն, և ոչ Մակեդոնեան երկաթէն խոցոտիլ ի մահ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Գիտեմ, գիտեմ, Քուրմերն սկսան ամենակերպ պակասութիւններ իւրեանց անձանց վերայ անքօղ և անվերարկու ցուցանել, որ ըստ ամենայնի հակառակ էին այն նպատակին, առ որ ուղղութիւն էր տուել նոցա Տիգրանուհեայ և Տիգրանայ կենցաղագիտութիւնն, և ուր դնում էր Ազգն՝ թէ և առանց գիտակցութեան մտաց։

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Ինչպէս վաղ ժամանակներն Քուրմերն մեր նախնի Ադրամելէքին առիթ տուին Հայրենիքէն զրկուիլ, այնպէս և այս երկրումն կամենալով ժողովրդեան աչքն միշտ փակ պահել, և թագաւորաց վերայ թագաւորել, ո՛վ որ միւսանգամ փորձ փորձեց նոցա վատթար վարք ու բարքն յանդիմանել, և կամ նոցա խաբէութեան ծածկոյթն շարժել, նորա կեանքին վնաս տուին։

1001
3986

ՍԱՆԴՈՒԽՏ

Արշիպեղագոսի կղզեցի Ցունաց ազգէն, ո՛չ սինլիքոր ոմն, այլ աշնուական, Թագաւորի Որդի, հանճարեղ և շքեղ երիտասարդ մի Դարդանոս անուն, տեսնելով՝ որ Քուրմերն Դրօշեաններու անուամբ վատ գաղափարներ են տարածում, կամեցաւ Դրօշելոց անունով լաւ և շահաւէտ գաղափարի դուռն բանալ. ծածուկ՝ մէկ փայտէ արձան չինել տուեց, ոսկի թիթեղով պատել տուեց, և ասաց, թէ երկինքէն է եկել։ Այս խօսքով՝ միւս Աստուածներու՝ որոց ձեռքով չինած լինելն յայտնի էր, և նոցա անուամբ կառուցեալ Տաճարներու, և նոցա մէջ սպասաւորող Քուրմերու պաշտօնեութիւնն խանգարեց։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Լաւ է՝ որ Քուրմերն՝ այն թագաւորի Որդուոյ դիւրին մէկ փորձանքի չհանդիպեցուցին, և կեանքին վնաս չտուին։

Գ. ՀԱՅԿԱԶՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Պոլսոյ Հայոց Թաղ. 1922
Գ. ՍՅԱՍԼԵՐՅԱՆ

ՍԱՆԴՈՒԽՏ

Ամենայն թշնամութիւնն և դարանակալութիւնն արին քուրմերն. և այն իսկ պատճառաւ Դարդանոս արքայորդին տեսնելով որ իւր այն բնիկ տեղն պիտի աւելի նեղութիւններ կրէ, թողեց իւր հայրենիքն, թողեց իւր գահաժառանգ վիճակն, շալկեց իւր Արձանն, նաւ նստաւ, ծովն անցաւ, եկաւ ծովի միւս երեսն, ուր այն ժամանակն Թագաւորում էր մէկ բարեսիրտ և ժողովրդեան վերայ հայրական դութ ունեցող Թագաւոր, որ իւր աթոռոյն ժառանգ ունէր միակ դուստր։ Այն պանդուխտ Դարդանոսին տուաւ նա իւր դուստրն, և դստեր հետ միասին իւր Թագաւորութեան ժառանգութիւնն. և Դարդանոս այն Արձանն դրեց Տաճարի մէջ, որ Ափրոդիտեայ տեղն՝ այն պաշտեն։

ՎԱՐԴԱՆՈՑՇ

Պայլաս Աստուածուհւոյ Արձանն չէ՞ր այն, որ մենք երբեմն Նանէ ենք ասում, երբեմն Աթէնաս. և Հռոմայեցիք՝ Մինէրվա են կոչում։

ՆՈՆՈՓԱՐ

Յունաց մէջ՝ իմաստութեան և քաջութեան Աստուածուհի էր համարուած։ Նորա անուամբ է Աթէնք քաղաքն կառուցած։ Արտաշէսի բերած Մկնդաւոր Աթէնասն՝ Թիլ Աւանումն է կանգնած Երկրորդ Տիգրանի օրէն սկսած. բայց մեր Ազգն այն Տաճար շատ չէ յաճախում։

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Մեր Ազգն՝ Անահիտին է աւելի պատիւ դնում, և Անահիտ ասելով՝ Ափրոդիտէն է հասկանում. եթէ Աթէնասին լինեը այնպէս ջերմեռանդ, ինչպէս Անահիտին է, մեր Ազգն երջանիկ կ՝լինեը։ Աթէնասին ջերմեռանդ լինելն՝ նոյն է, ինչ իմաստութիւն սիրելն, կամ Գիտութեանց և Ուսմանց հետամուտ լինելն։ Հին պատմութենէն պիտի

խրատուինք։ Ո՞րքան ժամանակ Պալլադիոն՝ Տրոյա քաղաքի Իլիոն բերդի Տաճարի մէջ էր, Դարդանոսի հիմնած Թագաւորութիւնն հաստատ էր, որովհետև Թագաւորներն և Իշխանք և Ժողովուրդք՝ Իմաստութիւն սիրելով՝ ո՛չ միայն քաջ էին, այլև հարուստ էին։ Բայց երբ Յոյնք գողացան Պալլադիոնն, կործանեցաւ Թէ՝ քաղաքն, և Թէ Թագաւորական Աթոռն, և Ժողովուրդն, անկան ոմանք ի սուր՝ և ոմանք ի գերութիւն։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Երանի՛ Թէ մեր Ազգն ևս այդ իւր համար սեպհականած լինեը։

ՆՈՆՈՓԱՐ

Վարդավառի Տօնն մէկ անգամ տեսայ, և ափսոսացի՝ որ ես կին եմ ծնել. ես իմ դուստրն տարած չեմ Աշտիշատ, և չկամիմ՝ որ երթայ և տեսնէ։

ՎԱՐԴԱՆՈՑՇ

Դու մէկ օր ինձ ասել էիր՝ Սանդո՛ւխտ Դշխոյ, Թէ Դարդանոս՝ որ ասել էր Պալլադիոնի համար՝ Թէ Երկինքէն է եկել. և Իմաստութեան Աստուածուհի է կոչուել, միայն այն էր՝ որ ցոյց տայ, Թէ Իմաստութիւնն Երկինքէն եկած պարգև է, և միայն այն Աստուածն պիտի պաշտել, որ Երկինքէն եկած լինի, և Իմաստութիւն բերած հետն։

ՅԵՂԱՆԱԿ Գ.

(Քրմապետն դարձեալ մտաւ Դահլիճ և Թագաւորի առջև կանգնեցաւ։)

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Քա՛ջամ, է՞ր Թողիր բարձդ և գնացիր. է՞ր չես նըստում տեղդ։

ՔՐՄԱՊԵՏ (Գոչելով.)

Ի՞նչ նստիմ՝ Թա՛գաւոր, քո դիւանում մեր Աստուածուհին հայհոյվեցաւ, և Դու երկայնամիտ դտնվեցար, լռեցիր և ներեցիր։

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Մեր Աստուածուհուոյն հայհոյող ոք չկայր մեր մէջ. ասա՛՝ ո՞վ հայհոյական բան ինչ խօսեցաւ, և ի՞նչ ասաց, և ո՞ր խօսքն էր հայհոյութիւն։

ՔՐՄԱՊԵՏ (Շոչոդելվ.)

Դու վեհաղնեայ Իշխան՝ Արծրունեաց Տան Եղջիւր Պարծանաց, ճշմարիտ խօսեցար, որ երբ մեր Վեհափառ Արքայն լռեցոյց այն ծեր Հրէի Թագէոսի հայհոյիչ լեզուն, որ ասում էր՝ թէ այն՝ փայտի վերայ կախված Հրէի կրօնն պիտի հալածէ Հայաստանէն Անահտական պաշտօնն, մեր Աղգն, մեր ժողովուրդն այնուհետև ամենայն օր Թագաւորի կենաց և առողջութեան համար մեծ մեծ զոհեր է բերում Աստուածուհուոյ Սեղանն։ Բայց Դշխոյն Սանդուխտ վստահ չէ, որ Անահիտ Աստուածուհին կարող է պահպանել Հայաստանն, մինչ մենք ամենեքեանս դիտենք և հաւատում ենք, որ Հայաստանի Պաշտպանն Անահիտ Դիցամայրն է։ Եւ այն բաւական չէր, Ամատունեաց Նահապետի Ընձակայ Դուստր Վարդանոյշն էս՝ իմ վերայ դրեց յանցանքն, որ իբր թէ ես չեմ միջնորդում Աստուածուհուոյ առջև՝ որ նա Թագաւորի սրտէն թախիծն մերժէ։

ՍԵՆԵՔԵՐԻՄ (Խրոնեցոցեալ ձայնով.)

Դու՝ քա՛ջամ՝ Քրմապետ ես, և ո՛չ աւելի ինչ, և քեզ այդ Քրմապետութիւնն պարգևել է մեր Վեհափառ Արքայն՝ ի մեծարանս միջնորդութեան Տիկնաց Տիկնոջ, Նոնոփարայ, և բնաւ չունիս իրաւունք Արքայի կամքն դատել, կամ Արքայական Հրամանն անգոսնել, որովհետև նա՝ որ ետ քեզ մէկ հրամանով Քրմապետ լինել, դարձեալ

նոյն մէկ հրամանով կարէ դարձուցանել քո բնիկ գեղջուկ վիճակն՝ ուր կայիր, մինչ չէ էիր Աստուածուհուոյ Տաճարի մէջ որջացել։ Նոյնպէս պիտի չհամարձակիս Սանդուխտ Դշխոյի դէմ ճիկ հանել. նա օրիորդ է այնքան պատուական, որպէս չէ՛ր ի նախնումն Տիգրանուհին իսկ. և ես և դու արժանի չենք նորա անունն անգամ ի բերան առնուլ։ Իսկ Վարդանոյշն այսօր իմ հարսն կոչեցաւ։ Վեհափառ Թագաւորի և Թագուհուոյ հաճութեամբ, և Սանդուխտ Դշխոյի կամակցութեամբ՝ նա իմ միակ Դերենիկին խօսեալ հարսն է։ (Քրմապետն այս կողմ և այն կողմ նայելով՝ տեսաւ որ Վարդանոյշն Դերենիկի յետևեն բռնած՝ բաղձալ կայ, երեսի գոյնն փոխարկուեցաւ։)

ՍՄԲԱՏ

Ամենեքեանս շնորհաւորեցինք նոցա Նշանախօսութիւնն. արժա՛ն է՝ հա՛յր Քրմապետ՝ որ դու ևս շնորհաւորես, որովհետև ծերունի ոմն ես։

ՆՈՆՈՓԱՐ

Ելէ՛ք՝ գնացէ՛ք, Դերենիկ և Վարդանոյշ, Հայր Քրմապետի ձեռն համբուրեցէ՛ք, որ ձեր Նշանախօսութիւնն շնորհաւորէ։

ՔՐՄԱՊԵՏ (Յանդգնութեամբ.)

Ես չեմ կամենում՝ որ նոքա մերձենան ինձ, Թա՛գուհի. Վարդանոյշն էգ ի՛նձ է, որ պիտի գառնիկ Դերենիկին պատառ պատառ անէ. նորա համար չի՛ բացուիր բերանս, որ նոցա վերայ կարդայ և հրաւիրէ ի վերուստ Անահիտ Աստուածուհուոյ շնորհն. Վարդանոյշն գիշակեր ի՛նձ է։

ՎԱՐԴԱՆՈՅՇ (Զարմանքով.)

Այո՛, Հայր Քրմապետ, ի՛նձ եմ և էգ ի՛նձ, Ընձակի դուստր, և թէ Դերենիկիս նման գառն գտնեմ՝ կ՝պատառեմ և կ՝ուտեմ. իսկ դու քնաւ մի՛ երկնչիր, որովհետև Սմբատ Բագրատունուոյ հետ այնքան սերտ բարեկամութիւն ունէի, որ նորա Հրէական օրինաց հակամիտել եմ, և երդուել եմ խաղենի չուտել։ (Ադենեւեան լցան անհնարին և անասնի ծաղրու։)

ՔՐՄԱԳԵՏ (Զբաղեալ.)

Ես ուրեմն խո՞ղ եմ, և իմ միսն խողենի՞, որ Վարդանոյշ պիտի չուտէ։ (Կրկին ծիծաղ սառուցեալ։)

ՆՈՆՈՓԱՐ

Դու՝ Ծերունի՛դ քարձամ՝ համարձակվում ես ինձ ընդդիմանա՞լ. մոռացա՞ր այն՝ իշով փայտ և ածուխ կրելդ, և թիկնամէջով բեռնակրութիւն անելդ, երբ քեզ՝ ձեր գեղի գիւղացի՛ք արգիլեցին՝ օտար վիճակի մէջ փայտ գողանալդ պատճառաւ՝ անտառ մտանելն. կամ մինչ քո դէմ Քրմերն փակել էին Անահտայ տաճարի դռներն, ես չմիջնորդեցի՞, որ Սիրելի Թագաւոր Ամուսինս քեզ առաջ Քրմութիւն տալ տուեց, և ապա Քրմապետութիւն. և երբ դու չյաջողեցիր ստուգել՝ թէ իսկապէս Վահունեաց ցեղէն ես սերեալ, դարձեալ իմ թախանձանո՞ք՝ Արքայ Տէր գլխոյս՝ չհրամայե՞ց, որ այնուհետև այդ առարկայի վերայ չյանդգնին խօսիլ Քուրմերն։

ՔՐՄԱԳԵՏՆ (Ցեղեալ է ցոյն.)

Կարծում ես՝ թէ այդ այնքան երախտապա՞րտ է արել անձնս՝ Քո բարերարութեան, որ ես պիտի լռեմ, երբ մեր Հայոց Ազգի և Հայաստան Աշխարհի Պաշտպան Աստուածուհոյ անունն հայհոյեն իմ աչացս յանդիման. այն ժամանակն անիրաւութեամբ էին մերժում, այժմ իրաւամբ պիտի մերժեն. և դու՝ ճշմարտութեան պաշտպանութիւն անելոյդ համար՝ կաշա՞ռ ես ուզում լռելս։ Չէ՛, Տի՛կին Նոնոփար, ո՛վ որ համարձակեցաւ ծաղր անել Աստուածուհոյ պաշտօնն՝ նա պիտի զոհ երթայ Աստուածուհոյ գարշապարաց պատուանդանի առջև, նորա Սեղանի վերայ։ Ես այն մտօք վեր չկացայ բարձէս, և այն դիտաւորութեամբ դուրս չելայ Դահլիճէն, որ միւսանգամ դամ և ձեր կարգումն նստիմ։ Աստուածուհին՝ զո՛հ է պահանջում։

ՍԱՆԴՈՒԽՏ

Դու՝ Աստուածուհոյ հետ ե՞րբ խօսեցար. նորա երեսն

ե՞րբ և ո՞ւր տեսար. քո մարմարիոնէ կուռած համր, խուլ և անշունչ և անզգայ դրօշեալն ո՞ր լեզուաւ խօսեցաւ։ Ամօթ չէ՞. բաւական չեղա՞ւ ձեր Քրմաց խաբէութիւնն. դեռ երկա՞ր պիտի Ազգն և Երկիրն պահէք մոլորութեան խաւարի մէջ։

ՍՄԲԱՏ

Ես քեզ ասացի՝ Հա՛յր Քրմապետ, թէ չնորհաւորէ՛. այլ որովհետև ես դեռաւուրց պատանի եմ՝ դու իմ բարի խորհուրդն անգոսնեցիր, և բանակռիւն բորբոքեցիր. բայց թէ ո՛ւնկն դրած լինէիր՝ այժմ տեղդ նստած կ՚լինէիր, և մենք փոխանակ այս վիճաբանութեան՝ գուցէ աւելի պիտանացու բաներ խօսէինք։

ՔՐՄԱԳԵՏ

Մինթէ աւելորդ և անպիտան ի՞նչ ես համարում՝ ո՛վ Դեռաւուրց Աստուած, Անահիտ Աստուածուհոյ փառաւորութեան աղաղակ խօսիլն։

ՎԱՐԴԱՆՈՅՇ (Անհանդուրժ.)

Թո՛ղ խօսին, թո՛ղ խօսին այդ առարկայի վերայ....

ՍՄԲԱՏ (Ընդդիմանալ.)

Գիտե՞ս՝ որ մէկ պահանջած զոհդ՝ քանի՞ զոհ իւր յետեւէն պիտի քարշէ։

ՎԱՐԴԱՆՈՅՇ

Թող խօսի այդ առարկայի վերայ՝ ո՛վ որ բան գիտէ, հնութեանց է տեղեակ. գիտեմ՝ որ փայտ կոտրելոյ և ածուխ կրելոյ ժամանակն սովորած չես, և մեզ այն ես ասում՝ ինչ մենք քանզ քեզ աւելի լաւ գիտենք։ Ես քեզ հարցնեմ, եթէ գիտե՞ս՝ տո՛ւր պատասխան. առաջ ի՞նչ էր այս Աստուածուհոյ անունն, և մեր Ազգն ե՞րբ սորա անունն Անահիտ կոչեց. ո՞վ և ե՞րբ բերեց մեր աշխարհ սորա պաշտօնն, և ո՞ւր առաջին անգամն սկսուեցաւ։

ՔՐՄԱԳԵՏ (Ցանկապատան.)

Ես ինքնս քննող եմ, և ո՛չ քննելի. հարցանող եմ, և ո՛չ

պատասխանատու. դատաւոր եմ դատող և դատապարտող, և ո՛չ ընդ դատաստանաւ և ընդ հարցաքննութեամբ, որ ձեզ պատասխան տամ, կամ ձեր հարցմանց բացատրութիւն։

ՍԱՆԴՈՒԽՏ (Հեղէկ.)

Դու՝ դաստիարակ ես, և մենք աշակերտք. մենք կամենում ենք լսել քեզմէն և ուսանիլ. ուսուցանելն է քո գործն ո՛վ Հայր Քրմապետ։ Մենք՝ կոյր ենք, և դու՝ մեր առաջնորդ, մեզ ճանապարհ ցոյց տալն և ճշմարտութեան լուսով մեզ ուղեցոյց լինիլն՝ քո սեպուհ պաշտօնն է՝ ո՛վ Օրէնսուսոյց։ Եթէ բոլոր Հայոց Ազգի և Հայաստան Աշխարհի Տաճարների մէջ՝ դուք Քուրմերդ՝ Աստուածներու և ժողովրդեան մէջ՝ միջնորդ էք, և յամենայն կողմանց առ ձեզ են դիմում և պատգամ հարցնում, և դուք ամենայն ժամանակ գնում էք Աստուածուհւոյ բեմի մօտ, նորամէն հարցափորձ էք անում և պատասխան էք բերում, մենք այժմ քեզ Դաբիրայի նման չենք հարցնում, թէ հարիւր տարի յետոյ ո՛վ պիտի լինի Հռոմայեցւոց Կայսր, այլ ասում ենք՝ թէ Հայերն ե՞րբ ճանաչեցին այս Անահիտ Աստուածուհւոյ՝ Հայրենեաց Պաշտպան լինիլն, ե՞ր պիտի խնայէք և անպատասխան թողուք։ (Քրմապետն պատասխան չտուաւ։)

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Եթէ Քարձամ իմանայը այդ, կամ՝ լսած լինէր, իսկոյն պատասխան կուտայը՝ Դստրի՛կ. երևի որ մինչև այդ աստիճան չէ հասել նորա գիտութիւնն։

ՆՈՆՈՓԱՐ

Ուրեմն թող երթայ և սովորի, հարցանէ ծեր Քուրմերէն, և մինչև սորա սովորիլն՝ մեզ այլ իմացող Քրմապետ դանենք։

ՎԱՐԴԱՆՈՑՇ

Աւելի լաւ չէ՞՝ որ երթայ ուղիղ և հարցանէ Աստուածուհիէն, և ասէ՝ թէ դու ղոհ էիր ուզում, նոքա ես

քեզմէն պատասխան են ուզում, թէ ե՞րբ եկար Հայաստան, առաջ ո՞ւր էիր թափառում. կամ մինչդեռ դու եկած չէիր, Հայաստան՝ ո՞ր Աստուածն կամ ո՞ր Աստուածուհին էր պաշտում։

ՔՐՄԱՊԵՏ

Դուք իմ վերայ ծաղրածութիւն էք անում. դուք այն Աստուածուհւոյ դէմ, որոյ ես սպասաւոր եմ, հայհոյութիւն էք յաճախում, նա ձեզ չի՛տար պատասխան։

ՆՈՆՈՓԱՐ

Մենք ևս չենք նորան ղոհ։

ՔՐՄԱՊԵՏ

Աստուածուհին Հզօր է և Ամենակարող, և նա՝ իւր զօրութեամբ կ՚առնու իւր պահանջած ղոհն, և նորան հակառակ՝ ոք չէ կարող կանգնիլ։

ՍԱՆԴՈՒԽՏ (Զօրացեալ հոգեվ.)

Հզօր և Ամենակարող կայ, բայց այն՝ քո Աստուածուհին չէ, այլ այն Աստուածն է, որոյ ստուերական օրինակ՝ Հեթանոսաց բանաստեղծական հոգին գուշակելով՝ մէկ Աստուածուհի է գոյացուցել, և կոչել է Երկինքէն եկած Իմաստութեան Աստուածուհի։ Սխալն միայն Աստուածուհի կոչելն չէ, որովհետև նա Աստուած է և ո՛չ Աստուածուհի, և ասվում է՝ Իմաստութիւն Հօր. ճշմարիտ Հզօրն և միայն Ամենակարողն նա է։

ՔՐՄԱՊԵՏ (Հրճուալ.)

Կամենում էիք՝ որ ես շնորհաւորեմ. ահա՛ ողջունում եմ ձեզ և շնորհաւորում, որ կա՛մ Ծեր Հրէայ Թադէոսն այս Դշխոյի արդանդն է մտել և անտի՛ է խօսում, կամ այս Սանդուխտ Օրիորդն՝ նորան աշակերտութիւն է արել։ Թա՛գաւոր՝ ինչ որ այնքան եռանդագին հալածեցիր քո Թագաւորութեան սկիզբն, ահա՛ այժմ տեսնում եմ

որ կրկին ընձիւղել է քո տան մէջ։ Ես վաղիւ կ'ժողովեմ Ազգի Նահապետաց Համախմբութիւնն, և կ'հարցանեմ՝ թէ Հրէաստանէն՝ Հրէայի բերած, Հերովդէսի տէրութենէն բղխած կրօնն, որոյ դէմ Հռոմայեցւոց կայսերական Գահն այնքան որոտացել է, ի՞նչ օգուտ կարէ բերել Հայաստանին, և վերջապէս կ'ասեմ՝ որ Ազգն, և Աշխարհն, և Նախնեաց կրօնն պաշտպանէն և փրկեն քո կեղծուպատիր պաշտօնասիրութենէն։ (Գնաց։)

ՍԵՆԵՔԵՐԻՄ (Դիմամէջ.)

Մեծայաղթ Տիգրան Երկրորդն չէ՞ր՝ որ Վահունեաց ձեռքէն առաւ Քրմութիւնն և Կալուածներն, երբ նոքա առանց Արքայական հաճութեան՝ Վահագնի առնապատկերն իւրեանց երկիրն էին տարել։ Այն օրէն սկսեալ՝ յայտնի եղև, որ Թագաւորներն պիտի Քրմաց և Քրմապետաց իշխեն և հրամայեն, և ո՛չ թէ Քուրմերն՝ Թագաւորի կամաց և հաճութեան վերայ Թագաւորեն։ Բազում ազգաց մէջ ի հնումն եղել է առանձնազարմութիւն. ո՞ր ազգն է մնացել ցարդ, որոյ մէջ հզօր է եղել Քրմութեան առանձնազարմութիւնն։ Մենք՝ ո՛չ Եգիպտացիք ենք և ո՛չ Հնդիկք։ Մեր Երուանդեան Տիգրանն՝ մեր Ազգի զինուորական զօրութիւնն և ժողովրդեան ճոխութիւնն աճեցնելոյ միայն կարգեր օրինադրեց. և Վաղարշակ ամեն կարգ և կանոն նորոգեց, բայց Քրմութիւնն թողեց ըստ առաջնոյն, և առանձին դասակարգ չշինեց՝ ժողովրդեան խուժանէն որոշած։ Վահունիք՝ իւրեանց կամօք սկսան իւրեանց նախնւոյ Վահագնի արձանին պաշտօնատար և սպասաւոր կանգնել, որպէս և Դեմետրի և Գիսանեայ սերունդն, որոց առաջիններն՝ Արքայական կամօք մերժեցան, և յետինքն՝ մահու պատուհաս ընկալան։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Քրմապետի խօսքերի ներքոյ՝ ես սպառնալիք նշմարեցի։ Միթէ՞ Ազգն և Երկիրն նորա կամքէն է կախեալ։ Այս ի՞նչ է։ Զլինի՞ թէ Թագաւորութեանս մէջ մի այլ նոր Թագաւորութիւն է գոյացել, որ մենք տակաւին չգիտենք։ Սմբա՛տ՝ է՞ր ես լռել, և չես խօսում։ Քո հայրն չէ՞ր իմ գլուխս Թագիւ պսակողն, և Թագադիր և Ասպետ՝ քո պատուանունն չէ՞ յաւուրց Վաղարշակայ։ Բագրատունիքդ չէի՞ք որ քան զամենայն նախարարս առաջ մերձեցայք Արշակունեաց տանն. քո հայրն չէ՞ր՝ որ Սենեքերիմայ հետ իմ Թագաւորութեանս հաստարան եղան, և Աբգարու ապարօշիւ պճնեցին իմ գլուխն։

ՍՄԲԱՏ

Ես դեռ ևս պատանեկութեան հասակէս ելած չեմ՝ Ա՛րքայ, և միայն այդ Ասպետ և Թագադիր Պատուանունն է՝ որ իմ հանդէպ Արքունական Դիւանի դուռն բաց է անում. վասնորոյ ես պարաւանդեալ եմ լռել ծերոց առջևն, և ունկնդիր լինել Քրմապետաց բոհմանց։ Եթէ կենդանի լինէր Հայրս՝ չկարծեմ թէ քարձամ այս Ատենէն ողջամբ ելանէր։ (Ադենեւեան ծէծողեան։)

ՆՈՆՈՓԱՐ (Մայրաքար ժպտելով.)

Թէպէտ պատանեկութեանդ քօղի տակն պատրուակվում ես՝ Սմբա՛տ, բայց ծածկոյթդ այնքան թանձր չէ՝ որ քեզ դողադարան դառնայ. վասնորոյ և յայտնի երևւում է առջևէդ ճակատդ, և յետևէդ՝ ագիդ, և մենք ճանաչում ենք՝ թէ ի՛նչ առիւծի կորիւն ես։ Արի՛, ե՛կ ձեռքս համբուրէ։ (Սմբատ գնաց և Թագուհւոյ յետին համբուրեց, այնպէս՝ որ շրթանց պագանելոյ յայնն փոփեցաւ Դիւանի մէջ. Թագուհին քաշեց Սմբատայ յետնէն, և ասաց.) Սենեքերիմ, Դերենիկդ չունի՞ արդեօք մի այնպիսի քոյր՝ որ Սմբատին հարսնացնենք։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Ցոփաց հանելով.)

Զգիտե՞ս՝ Թա՛գուհի, որ Դերենիկ միամօր է։

ՍԱՆԴՈՒԽՏ

Դերենիկի Քոյր է համարուած Վեհաշնեայ Վարդուհի Օրիորդն, որ մեր Վարդանուշի հոգեկից բարեկամն է, այնքան անհուն և անբաւ ճոխութեանց միակ ժառանգորդ, բայց դեռ տանամեայ է. ես բարւոք եմ համարում, որ այն չքնաղ, պարկեշտ և զգաստ օրիորդն՝ Սմբատի հարսն կոչուի։

ՍԱՆՆԱՏՐՈՒԿ

Ես յօժար եմ. դու ի՞նչ ես ասում՝ Սե՛նեքերիմ։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ (Զարմացած՝ երկրպագելով Աբգային.)

Կամք Տեառնդ օրհնեալ եղիցի՝ Միագլխապետ մեր Հզօր. ես առաւել ևս եմ յօժար և ուրախ՝ որ Արքայական Թագաւորին՝ իմ գերդաստանին փեսայանայ։

ՆՈՆՈՓԱՐ

Սմբա՛տ՝ եթէ դո՛ւ ևս յօժար ես, գնա՛՝ Արքայի ձեռն պա՛գ։ (Սմբատ առաջ երկրն համբոյր տուել Թագուհոյ աջոյն, և դանդիմ ընդոստ ելանելով հասաւ, և Թագուհոյի ձեռնին համբուրելոյ. ոտնեւեան ձայն տուին ձիձաղելով։)

ՍԱՆՆԱՏՐՈՒԿ (Համբուրելով Սմբատայ ճակատն.)

Շնորհաւո՛ր լինի Նշանդ, և Հարսանեացդ՝ ուրախակից լինինք ամենեքեանս։

ՍԱՆԴՈՒԽՏ (Բռնելոյ Սմբատայ յեռանին.)

Թագուհի Մայրս ի նանիր չասաց անունդ՝ կորիւն առիւծու, երևի՝ ամենայն աւարներիդ վերայ այդպէս ես ոստոստում։ (Տարա Սենեւերիմայ մօտ։) Սմբա՛տ՝ ահա՛ Հայրդ կենդանացաւ, համբուրի՛ սորա ձեռն։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Զէ՛՝ Դշխոյ, Վարդուհին իմ Տիկնոջ մերձաւոր ազգակա՛ն է .... երբ Վարդուհւոյ Նշանախօսութեան առհաւատչեայ մատանին կուտայ՝ այն ժամանակն կուտամ ձեռնս համբուրել, և ես նորա ճակատն կ՚պագնեմ։

ՍԱՆԴՈՒԽՏ (Հանելոյ Սմբատայ ճակատին նորա Ասպետական մատանին.)

Խղճուկ Վարդուհին՝ այս մատանին՝ իւր ո՞ր մատին պիտի յարմարեցնէ, կամ քանի՞ մատունքն ի միասին ձուլած պիտի ագանի. (Ետ տուելոյ Սենեւերիմին։)

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Այժմ իմացայ՝ որ իմ Սանիկ Վարդուհին բարեբաստիկ է, որ հարսնացաւ Բագրատունեաց Տան։ (Համբուրելոյ Սմբատայ ճակատն, և Սմբատ՝ Սենեւերիմայ յեռան։)

ԹԱԳԱՒՈՐՆ ԵՒ ԱՄԵՆՆԵՔԻՆ (Մեւոին.)

Շնորհաւո՛ր, շնորհաւո՛ր, շնորհաւո՛ր լինի։

ՎԱՐԴԱՆՈՅՇ

Սմբա՛տ, հրաւէ՛ր ուղարկէ Քարձամ Քրմապետի Եռևէն որ գայ՝ և քո նշանախօսութիւնն շնորհաւորէ, որ դու ևս ինձ նման ապաշնորհ և անշնորհ չմնաս։ (Կրկին ոտնեւեան ձիձաղելոյն։)

ՍՄԲԱՏ

Վա՛րդանոյշ, ինչ որ ինքնդ չյօժարեցար ուտել, այն այժմ իմ առջևս ես դնում։ Միթէ ես քան զքեզ աւելի հրեայ չե՞մ։ (Վերոյին ձիձաղելոյն։)

ՆՈՆՈՓԱՐ

Զարմանում եմ աշխարհի անհիմն անհաստատ փոփոխականութեան վերայ, և չեմ կարողանում ինքս ինձ բաւարար բացատրութիւն տալ։ Ո՞չ ապաքէն մենք այժմ Հայաստանումն ենք, և մեր Տէրութիւնն ասվում է՝ Հայոց Թագաւորութիւն. այլ ի՞նչ կայ այս տեղ՝ Հայոց։ Թագաւորն՝ Արշակունի՝ Պարթևաց ցեղէն։ Ես՝ որ Թագուհի եմ Հայոց՝ դուստր եմ Ալանաց՝ կասպից ծովափներէն։ Սենեքերիմ Արծրունի՝ է Ասորեստանէն։ Սմբատ Բագրատունի՝ Պաղեստինէն՝ Եբրայեցւոց սերունդէն։ Վարդանոյշն Ամատունի՝ Պարսկամարաստանէն։ Վարդուհի՝ է միայն զուտ Հայազգի։

ՍՄԲԱՏ (Մէծ-Վէրէ.)

Քրմապետն Քարձամ ևս զուտ Հայազգի չէ՞ր՝ մաքրեալ ի բովն մեհենական քրայից. է՞ր չպահեցիք ամուր և պինդ. գուցէ՞ թէ իսկապէս Վահագնի դիւցազնական ցեղէն էր սերեալ։ (Ադենէոն Ձէձուղեան։)

ՎԱՐԱԳՈՅՐ ԵՐԿՐՈՐԴ

ՅԵՂԱՆԱԿ Ա.

(Տեսարանն ցոյցանէ Սանդխոյ Դշխոյէ սենեակն, ուր՝ յանկեան ընդ արևելս դրած է յոյժ գեղանակ և գրական, և նորա վերայ խաչելութեան նշան, որոյ յաջմէ և յահեկէ վառին կանթեղք։)

ՍԱՆԴՈՒԽՏ (Ի ծունչս հանդերձ խաչէ.)

Ո՛վ Սուրբ, Հզօր և Անմահ փեսայ՝ հոգւոյս Ամենասիրելի Յիսուս, մինչև ցե՞րբ համբերեմ, մինչև ցե՞րբ ծածկեմ և թագուցանեմ սրտիս, հոգւոյս մէջ քո դանձն, քո գեղեցիկ և պատուական Մարգարիտն, քո՝ ինձ պարգեւեալ Հաւատն, քո՝ ինձ շնորհեալ Յոյսն, քո՝ իմ հոգւոյս մէջ հեղեալ սէրն. մինչև ցե՞րբ լսեմ անհաւատից բերնէն հայհոյութիւն, որով քո անքննելի և անհասանելի Աստուածանունն դրոշմուած են սնոտեաց վերայ։ Այսօր՝ Հզօր և Ամենակարող անուն նուիրեց Քրմապետն՝ Անահիտ չասուածուհւոյն, որոյ ո՛չինչ լինիլն՝ ինձ վա՛ղ էր ծանուցել քո արժանաւոր Ծառայն, քո եղբայրն, իմ մտաց Լուսաւորիչն Թադէոս։ Ես չմարթացայ այլ ևս հանդուրժել, և պատասխանեցի՝ թէ Նա՝ Որ Իմաստութիւն է Հօր, է միայն ճշմարիտ Հզօր և Ամենակարող. բայց չունեցայ այնքան ոյժ, որ աւելի բացայայտ փառաւորէի քո Ամենափառաւոր Աստուածութիւնն։

Արդարև ես այս լսել էի Յի՛սուս Քրիստոս՝ քո Այգեւոյ քրանաՀան Մշակէն՝ Թադէոսէն. նա՛ էր ինձ ասել, թէ Եսայի էր տեսել զքեզ՝ Հինաւուրց՝ յԱթոռ նստած, և երկնային հրակերպեանքն քո շրջապատն կային, և հոլաթեւեան Սերովբէք քեզ էին երգում անդադար՝ Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ Տէր Զօրութեանց։ Եւ քեզ անուն ասվեցաւ՝ ԸՆԴ ՄԵԶ ԱՍՏՈՒԱԾ։ ԵՒ Դու որպէս Մանուկ ծնար մեզ, Դու՝ Որդի տուար մեզ։ քո իշխանութիւնն էր և է միշտ ի վերայ ուսոց քոց։ ԵՒ քեզ՝ Որ ես Տէր Զօրութեանց, Որոյ յանդիման երիցս Սուրբ երգեցաւ, անուն կոչվեցաւ Հրեշտակ Մեծի Խորհրդոյ, Սքանչելի, Խորհրդակից, Աստուած Հզօր, Տիրապետ, Իշխան խաղաղութեան, Հայր հանդերձելոյ յաւիտենին։

Քրմապետն ասաց՝ թէ Թադէոսն այս Դշխոյի արդանդի մէջ է մտել։ կամ այս Սանդուխտ Օրիորդ աշակերտութիւն է արել նորան։ Ծածկագէ՛տ Յիսուս։ Դու քաջ գիտես՝ որ Թադէոսի քարոզած ճշմարտութիւնն կայ հոգւոյս մէջ, և ես աշակերտութիւն անելով Թադէոսի՝ աշակերտել եմ քո սուրբ աւետարանութեան կրօնին, և քո աւետարանի վարդապետութիւնն արել է սիրաս Աթոռ՝ որոյ վերայ միայն Դու ես բաղմած, և իմ հոգին արել է Տաղաւար, որ միայն քո ինամին հանդչելոյն եղել է նման այն ծխալից Տանն, ուր Եսայի տեսել էր քո Հինաւուրց Մանկանդ Լուսակերտ Գահն, և լսել էր սրոբէանուագ Սրբերգեանութիւնն։ ԵՒ մենք՝ նորամէն ենք սովորել առ քեզ դիմել՝ ողորմութիւն հայցելով, թէ Սուրբ Աստուած, Սուրբ և Հզօր, Սուրբ և Անմահ, Որ Մարմնացար, և Մարդացար։ Ծնար և Յայտնեցար, Խաչեցար, և Մեռար, և Յարեար, և Համբարձար, և Եկիր, և Գալոց ես՝ ողորմեա՛ մեզ։ Արդ՝ Յի՛սուս՝ փեսա՛յ իմ երկնաւոր, Անստուեր Լոյս իմանալի, ի ծունկս անկեալ առաջի քո խաչի՝ որ ինչպէս լսում եմ, Պօղոս իւր պարծանք է կոչում, աղաչում եմ քո մարդասիրութիւնն, ինայեա՛ այսքան հաղարաց հաղար Հայազգի ժողովրդեան։ բա՛ց սոցա աչքն, որ տեսնեն քո երեսն՝ որպէս Եսայի տեսաւ, և քեզ ծանօթանան՝ որպէս Թադէոսն էր ճանաչել, և ինձ ևս ծանօթացոյց։ ԵՒ հաւատան՝ որպէս մեր Նախնին Աբգար էր հաւատացել։ և դաւանին՝ որպէս ես եմ դաւանում։

Յի՛սուս՝ Դու Ամենակարող ես, և քո սուրբ կամաց առջևն չի՛տկարանար ինչ։ թէ Դու կամենաս՝ Քրի՛ստոս իմ Փրկիչ և Փրկանք, տինպէս կ՚մերժես այս բազմաստուած կռապաշտութեան խաւարն մեր Ազգի մէջէն, ինչպէս քո արեգակն միշտ իւր ճառագայթներով մերժում է և փարատում է մեգն և մառախուղն։

Յիսուս Փեսայ իմ, Դո՛ւ ողորմիր այս խղճուկ Ազգին, այս պարզամիտ Ազգին, այս մոլորեալ Ազգին։ այս խոր խաւարի աղջամուղջի մէջ խարխափեալ Ազգին։ Դու՝ քո ուսոց վերայ դրած Իշխանութեան խաչի Նշանդ դի՛ր Հայաստանի վերայ։ արա՛՝ սորա մէջ բնակեալ ժողովուրդն քեզ Հօտ սեփական։ քո խաչն արօտի։ և իմ Հօր սրտի արիւնապարտութեան թախիծն փարատէ՛։

Այսօր Քրմապետն սուտ Աստուածուհւոյ բերանով զոհ էր պահանջում։ Եթէ Ազգի և Հայրենեաց փրկութեան համար իմ արիւնն հարկաւոր է, իմ հոգւոյս փեսայ Յիսուս, քեզ քաջ յայտնի է՝ որ ես յօժար և պատրաստ եմ՝ որ մէկ ժամ առաջ քեզ հետ միաւորվելոյ համար՝ քո սուրբ Սեղանոյ վերայ զոհ մատչի ի հոտ անուշից, ինչպէս Յեփթայէի դստեր արիւնն, միայն թէ՝ Մայրս չտեսնէ իմ Պատարագն, և Վարդանոյշն՝ իւր հարսնութեան օրերն՝ իւր սեռականափայլ աչքերէն արտասուք չքամէ, և Սմբատ մոռանայ, և Վարդուհին բնաւ չմնանայ, որ ե՛ս նորա հարսանիքն հանդերձեցի։ Մարդասէ՛ր Յիսուս, ա՛յս է այժմ քո անարժան Հարսիս աղաչանքն։

Ես ի սէր իմ Ազգի և վասն փրկութեան Հայրենեաց յօժար եմ ողջակիզել, ո՛չ Սահակի նման անբան երէց փոխանակութեամբ, այլ Սաբեկայ ծառէն կախուած քո

կամաւ նուիրուած խոյի նման. ես յօժար եմ՝ մեղսաքաւիչ նոխազ լինիլ, որպէս Դու եղար Գառնդ Աստուծոյ բարձող մեղաց աշխարհի. ամենայն Հայոց կռապաշտութեան մեղաց դատապարտութիւնն կ'առնում շալակս՝ Ցի՛սուս, և կուգամ առ քեզ ուրախութեամբ, ո՛չ յանապատ անբնակ և ամայի, այլ ի Նաւահանդիստդ ապահով, ի Վերինդ Երուսաղէմ, ի Սիոն լեառնդ սուրբ, զի և Դու՝ ի մեծարանս իմոյ արեան առաքես ի վերուստ քո շնորհն և քո ողորմութիւնն ի վերայ Ազգին և Աշխարհին Հայոց, որ Հայաստանի մէջ, քո յառաջընտիր Արարատ լերին վերայ, ուր՝ որպէս գրաւական քո Սիրոյ հանգիստ տուիր՝ քո փրկարար Սուրբ Խաչիդ Օրինակ՝ աղատապարդև Տապանին, ինչպէս Նոյի բերանով խոստացել ես Հայկերդի մէջ մեր Նախնւոյն, հանդչի նախ Դրախտատունկ Լերին Կենաց Ծառոյ Անմահական Պտղոց քաղցրութիւնն. երկրորդ քորեբայ Անկեզ Մորենւոյ խորհուրդն. երրորդ Սինէական Օրէնսատուութեան փառքն. չորրորդ Թաբոր Լերին Մեծվայելչութիւնն. հինգերորդ Սիոնի վերնատան Ընթրեաց Շնորհաբաշխութիւնն. վեցերորդ Գողգոթայի փրկարար Զօրութիւնն. և եօթներորդ՝ Համբարձման Լերին Զիթաստանեայց Պարարտութեան Օծութիւնն։

ՅԵՂԱՆԱԿ Բ.

(Տեսարանն ցուցանէ Արտոյէ Դահլէճն՝ ուր Նորեալ կան Սանապրոկ, Նոնոփար և Եօթն Որդիք Սանապրոկ Արտոյէ՝ ծնեալք է Նոնոփարայ։ Մոտանէ է Դահլէճն զ յարտուն Սենեկապետայ։)

ՍԵՆԵԿԱՊԵՏՆ

Ա՛րքայ՝ յաւիտեան կեա՛ց. Ալանաց երկրէն եկել է Պատգամաւոր, և կամենում է վաղվաղակի տեսանել Արքայիդ երեսն։

ՍԱՆԱՏՐՈՒԿ ԵՒ ՆՈՆՈՓԱՐ

Թո՛ղ դայ. հրաւիրեցէ՛ք Դահլիճ։ (Սենեկապետն ելլ, և յետ սակաւուց Դահլիճն մտաւ Լեռնական զ։)

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԵՐ (Սարհանդակ.)

Քեզ ողջութիւն՝ Ա՛րքայ Հայոց. քո Աներն Արքայն Ալանաց հիւանդացաւ ծանր հիւանդութեամբ և ընկաւ մահիճ, և է մերձ ի մահ։ Ցանկանում է՝ որ յառաջ քան իւր մեռանիլն՝ գէթ առ անգամ մի ևս կարողանայ տեսանել իւր Ամենասիրելի Դստեր՝ Հայաստանի Տիկնոջ անձն. ինձ հրամայեցին սուրհանդակի պէս արշաւասոյր վազել, գալ և բոլոր Արքայական Գերդաստանի աղերսն տարածել ընդ գարշապարօք Հզօր Թագաւորիդ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Ա՛ թաքուհին.)

Ի՞նչ պատասխան տամ. եթէ ես ձեռնհասութիւն ունենայի՝ քեզ հետ ուղեկից կ'լինէի. կամենո՞ւմ ես երթալ։

ՆՈՆՈՓԱՐ (Արտասուօք.)

Եթէ քո վեհափառութեան հաճութիւն լինի, կամենում եմ երթալ. բաղում տարիներ են անցել՝ որ ես Սիրական Ծնողիս երեսն տեսած չեմ. տո՛ւր ինձ հրաման երթալ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Վրդովեալ.)

Կամք քո է՝ Տի՛կին։ Մի՞թէ իմ և քո հրամանն մի և նոյն չէ՞. թէ կամիս երթալ քո Սիրական Ծնողի, և իմ Ամենապատիւ Աներ թագաւորահօր այցելութիւն, ե՞րբ միանգամ կամենաս՝ ունիս ընդարձակութիւն երթալ, և յորդւոցդ՝ ո՞րն կամիս՝ ա՛ռ և տա՛ր հետդ։

ՆՈՆՈՓԱՐ

Ես այս իսկ ժամուս ցանկանում եմ յուղի անկանիլ.

արդեօք կ'հանիմ և կենդանի կ'տեսնե՞մ ողորմելի Հօրս երեսն։

ՈՐԴԻՔ ԵՕԹԱՆԵՔԻՆ

Մենք ևս կ'երթանք՝ Ա՛ր.քայ Հայրիկ, մենք ևս կ'երթանք՝ Թագուհի՛ Մայրիկ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Գնացէ՛ք, գնացէ՛ք՝ իմ կորիւններ։

ՆՈՆՈՓԱՐ (Յուսոյեալ է ուղղելն.)

Եկէ՛ք, եկէ՛ք՝ իմ զաւակունք, ձեր ծեր Պապու երեսն միանգամ ևս տեսէք. երանի թէ այնպէս հանէինք, որ կենդանի գտնէինք, և նորա վերջին օրհնութիւնն ժառանգէինք։ Տէ՛ր իմ Ար.քայ՝ Սանդուխտս քեզ եմ յանձնում

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Սանդուխտի կողմանէ երկրպագութիւն ինչ մի՛ ունենար։ Երթայք բարեաւ. պաշտպանութիւնն Դիցամօրն Անահտայ լինի ձեր և մեր վերայ. երթայք բարեաւ։

ՆՈՆՈՓԱՐ ԵՒ ԵՕԹՆ ՈՐԴԻՔ

(Մէ՛ հոմբուրելով Արտայ՛ աչն և երեսն՝ ասեն.)

Մնա՛ս բարեաւ, մնա՛ս բարեաւ, մնա՛ս բարեաւ։

ՅԵՂԱՆԱԿ Գ.

(Սանտրուկ է դահլիճն դիպնակ։)

ՍԵՆԵԿԱՊԵՏ ՄԻ (Ներս մտանէ.)

Ա՛ր.քայ՝ յաւիտեա՛ն կեաց. սուրհանդակ է եկել վասպուրական աշխարհէն, և շտապում է ելանել յատեան Ար.քայիդ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Հրաման է. թո՛ղ գայ։ (Սենեկապետն ելնա և դարձեալ ներս մտնա Սուրհանդակի հետ։)

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Թափառական Մարաց խաժամուժներն՝ հարիւր հազար հեծեալք արշաւեցին Տոսբայ Գաւառն, ասպատակեցին Ոստանայ կողմերն, և խուժելով ի ներքսակողմն՝ պաշարել են վանայ ամուրքն, և հնարներ են հայթայթում բռնութեամբ առնուլ։ Արծրունեաց Նահապետն անդ չէր՝ որ երկրին պաշտպանէր. եթէ օգնութիւնդ յապաղէ, անհամար աւար և գերիք պիտի երթան անդր քան զեկբատանայ և Նինուէի աւերակներն։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Ա՛ Սենեկապետն.)

Կոչեսցի Սենեքերիմ Նահապետ Արծրունեաց։ (Սենեկապետն և Սուրհանդակն ելին է դահլիճն։)

ՅԵՂԱՆԱԿ Դ.

(Սանտրուկ դահլիճն մեջ դիպնակ և ամբոխեալ, ասր մտանէ Սենեքերիմ.)

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Շփոթ կայ քո Հայրենեաց կողմն, և քո կալուածքն կան ի վտանգի։ Հարիւր հազար Թափառական Մարաց ձիաւորք յարձակել են քո Նախարարութեան երկրամէջն, և վան բերդաքաղաքն պաշարել են։

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Ինձ ևս եկաւ գուժկան, և ես արդէն պատրաստուել էի գալ առնուլ հրաման ի Թագաւորէդ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Ա՛ռ՝ քեզ հետ քո նոր խնամին՝ ընձակ Ամատունեաց Նահապետն, և երկոցունցդ գերդաստանն, և գնացէք օգնութիւն Տոսբայ, և երբ պաշտպանութեամբ Աստուածուհւոյն Անահտայ՝ յաղթութեան յաջողութիւնն ըստ իւր վաղընջուց սովորութեան սարդապսակ առնէ ձեր դրօշներն, և թշնամեաց խուժանն հալածուի, որքան առ և ապուր ծնայ՝ ամենայնն պառոյդ և պաշտատական եմ պարդևում քո հարսն Վարդանուշին և քո որդւոյն Դերենիկին։ Նոցա Հարսանիքն անդ կատարեցէք։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Ես յոյս ունէի՝ թէ Դերենիկիս Հարսանեաց ուրախակից կ՚լինիս և Դու՝ Վեհափառ Թագաւոր։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Ափսո՛ս՝ որ ես չեմ յաջողիր նոցա Հարսանեաց պարակից և զուարճակից լինիլ, այլ քեզ լաւ է՝ որ քո որդւոյ Հարսանիքն կատարես քո կալուածոց սեպհական տան և հայրենի ժառանգութեան մէջ։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Ուրեմն միւսանգամ չեմ արժանանար քո տեսութեան՝ Վեհափառ Արքայ, Տո՛ւր ինձ հրաման բաղձալ քեզ ծնալ բարեաւ։ (Համբուրէ ղծոնքն Թագաւորի։)

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Բարեաւ երթիցես և ողջամբ դարձցիս՝ իմ հաւատարիմ Սենեքերիմ Իշխան. բարեաւ երթիցիք ամենեքեան. ի կողմանէ իմմէ՝ իմ սէրն և շնորհն յայտնէ՝ նոր խնամւոյդ ընձակայ Նահապետին Ամատունեաց, և շնորհաւորէ՝ դստեր նշանն և հարսնախօսութիւնն։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Արդեօք հնար կա՞յ ինձ երթալ յերկրպագութիւն Թագուհւոյն։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Իրաւ՝ լա՛ւ միտքս ձգեցիր։ Այս պատուէրս աւելի ճիշդ պիտի պահպանես։ Կէս ժամաւ յառաջ քան զայս սուրհանդակ եկաւ իմ Աներոյ՝ Ալանաց Թագաւորի դռնէն։ Զասացի՞՝ թէ սիրտս մի թախծալի լրոյ է սպասում։ Աներս մերձ ի մահ հիւանդ է. և Թագուհին՝ եօթն որդւովք գնաց հիւանդ հօրն այցելութիւն։ Մնաց Դշխոյն Սանդուխտ միայնակ։ Տե՛ս և զգուշացիր, որ Վարդանուշի հետ հրաժարական ողջոյն տալոյ և բաժանվելոյ ժամանակն՝ Սանդուխտ աւելի չարտասուէ։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Սմբատ Ասպետն իւր Նշանածի մօտն է, նորան ի՞նչ անեմ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Գիտեմ՝ որ Սմբատ Ասպետն էս չի՛ կամենար իւր Վարդուհիէն անջատիլ, փոյթ չէ, թող քեզ հետ երթայ, քաջ և անպարտելի պատանի է. նորա սուսերն քեզ պիտոյ կ՚լինի հարիւր հազար ձիաւորաց դէմ։ Միայն փութացէք՝ որ այս գիշեր ճանապարհ ելանէք։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ (Արտասուք յաչս.)

Ո՛ղջ լեր՝ Արքայդ մեր Վեհափառ։ (Համբուրէ դաբչեալ ղծոնքն Արքայի։)

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Համբուրեալ ղելոնն Սենեքերիմայ.)

Երթիջիք խաղաղութեամբ և դարձջիք ուրախութեամբ՝ Հաստարանքդ իմոյ Թագաւորութեան, և ուղեկից լիցին ձեզ խնամք պաշտպանութեան Աստուածուհւոյն՝ ի գնալն ձեր և ի դառնալն։

ՍԵՆՆԵՔԵՐԻՄ

Միշտ ողջութիւն քեզ՝ Ա՛ր քայ։ (Ելանէ։)

ՅԵՂԱՆԱԿ Ե·

(Սանտրոկ յիւրամ Դահլիէ : Մրանէ Սանդուխ :)

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Թագուհի Մայրդ յուղի անկա՞ւ արդեօք՝ Դստրիկ իմ անզուգական :

ՍԱՆԴՈՒԽՏ

Այո՛ Հայրիկ իմ Աբքայ, արդէն նոցա կարաւանն հեռի է Շաւարշանէն :

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Դո՞ւ չկամեցար երթալ, թէ Տիկին Մայրդ քեզ չառաջարկեց, որ երթաս, և Թագաւոր Պապուդ երեսն տեսնես՝ գուցէ այս վերջին անգամն :

ՍԱՆԴՈՒԽՏ

Այն Հզօրն և Ամենակարողն, Հայրի՛կ իմ Աբքայ, Որոյ անուամբ ես գրգռեցի Քրմապետի բարկութիւնն, եթէ տնօրինած լինէր իմ երթալն, և՛ Տիկին Մայրս կ՚առաջարկէր, և՛ ես ցանկութիւն և բաղձանք կ՚ստանայի երթալ : Բայց ո՞վ գիտէ՝ թէ վաղիւ ի՞նչ պիտի բերէ՝ այսօր ի մուտս իւր խոնարհեալ արեգակն՝ իւր առաւօտեան ծագմամբ :

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Դժկամակ·)

Վաղիւ ի՞նչ պիտի բերէ արեգակն· եթէ բերէ պարզ և վճիտ օր՝ վաղքաջ ընդ առաւօտն ի միասին կ՚երթանք յորսս՝ կա՛մ Մակուայ կողմն կամ Աւարայրի· այն տեղերքն այս օրերս շատ հաւք և շատ էրէք են լինում: Զլինի՞՝ թէ քո մաքուր սրտի մէջ երկիւղ կամ կասկած է ձգել այն ծեր Քարձամ Քրմապետի շաղփաղփութիւնն : Եթէ միւսանգամ համարձակի կրկնել իւր բոհմունքն, ի գլուխ իմ եմ երդուում, որ լեղուն ծոծրակէն հանել կուտամ:

ՍԱՆԴՈՒԽՏ (Հեշիկ·)

Է՞ր ես բարկանում՝ Տէր իմ Աբքայ Հայրիկ· կամ ես ի՞նչ պատճառաւ պիտի կասկած կամ երկիւղ կրեմ Քրմապետի սպառնալիքէն· այն Հզօրն և այն Ամենակարողն՝ իւր անպատում և անքննելի տնօրէնութիւնքն կատարելոյ համար՝ Քրմապետի լեղուն կարէ ի կիր արկանել այնպէս, որպէս՝ երբ կամենում է մեզ զգաստութիւն տալ, անօր և թեթև ամպերու շոգեաց մէջէն զարհուրելի որոտմանց սաստ է լսեցնում, որ կարծում ես թէ երկինք բոլոր պիտի փլչի և մեր հողագունեան՝ չիք դարձուցանէ : Անակնկալ՝ Տիկին Մայրս գնաց իւր որդւոց հետ միասին՝ իւր Հօր այցելութիւն· Վարդանոյշն գնաց՝ որ իւր հարսնութեամբ՝ իւր հանդերձեալ ժառանգութիւնն մտանէ· Սբմբատ Ասպետ գնաց իւր դեռաւուրց հարսին հետ զուարճանալ· Սենեքերիմ գնաց իւր Նահապետական տունն կորզել հինից ճանկերէն և ասպատակաց ճիրաններէն: Մինչդեռ ակմբեալ կայինք Դիւանումն, այս պարագայքն կայի՞ն ի միջի: Մինչ Դու ասացիր՝ թէ թախծական ապագայի եմ սգաստում, Պապուս հիւանդութիւնն, կամ վասպուրականի մէջ ասպատակաց սպրդիլն կայի՞ն խորհրդոյդ մէջ:

Ո՞վ կարող է գուշակել՝ թէ այն Հզօրն և այն Ամենակարողն՝ որոյ հեծութիւնն լսեց, և նոցա աչքերն հեռացոյց այն տեսարանէն, որն որ չկամեցաւ՝ թէ նոքա տեսանեն :

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Դստրի՛կ սիրական, հաւատա՛ իմ անկեղծ խոստովանութեան, որ չեմ հասկանում քո՝ իմաստութեամբ լի և պատարուն խօսքերն : Սրտիս մէջէն մի բնազդեցութիւն դրդում է միշտ՝ որ այն քո ասած բաներն լաւ քննեմ. և դարձեալ նոյն բնազդեցութիւնն բռնադատում է՝ որ քո բաներուն հաստ և խելամուտ չլինիմ: Երկիւղ է տարածվում հոգւոյս մէջ, և արհաւրօք լցվում են նորա ամեն

խորշիկներն, որ այդ քո ասածներն, որ ինձ համար մի մթին և խո՛ր վիրա՛պ է, պիտի ինձ հարկ դնեն տարաժամ արտասուք հեղուլ իմ սիրելեաց վերայ։ Եթէ եօթն որդւոցս դէպ լինի մի աւուր մէջ, մի ժամու մէջ սրոյ ճարակ երթալ, փոյթս չէ լինելոց, միայն թէ քեզ չար ինչ չպատահի։

Ա՛խ՝ Սանդուխտ, երանի՞ թէ իմանաս՝ թէ ո՞րքան նե՛ղ է դլխոյս վերայ այս Արքայական Ապարօշն. կարծում եմ՝ թէ Աբգարու տան անմեղ արիւնն օր ըստ օրէ աւելի ծանրանում է խոյրիս վերայ, և այն արեան կաթիլներն հրաշէկ շանթից նման գլխոյս վերայ տեղալով՝ ճնշում են և այրում։ Իսկ այն Ծեր Թադէոսի արիւնն՝ որպէս սարսափեցուցիչ ճիւաղ՝ խսպառ ամենայն տեղ հետամուտ լինելով ինձ՝ չէ թոյլ տալիս որ տամ նինջ արտեւանաց կամ հանգիստ իրանաց իմոց։

ՍԱՆԴՈՒԽՏ

Հա՛յրիկ Արքայ, միայն այն Հզօրն և Ամենակարողն ունի զօրութիւն քեզ աղատութիւն շնորհել ամեն վիշտերէդ և տագնապներէդ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Յուզմամբ.)

Իմ Դշխոյ Դստրիկ, դահս նմա՛ն է ինձ՝ կասկարոյի, որոյ վերայ կրեսոս Լիւդիացի ժամ մի չկարաց տոկալ, և իւր աղաղակաւն՝ յաղթող թշնամւոյ սիրտն ի գութ շարժեց. անկողինս նման է փշով և տատասկով լի խորխորատի, որոյ յատակն գահավէժ գլորվել եմ մերկ, և անտանելի ցաւերով տանջվում եմ քստմնափուշ սայրասուր խայթոցներով։ Դստրի՛կ. դու անմեղ ես, դու մաքուր ես, որպէս մեր անարատ Աստուածուհին Անահիտ. քո աղօթքն և քո խունկն նա կ՚ընդունի. դնա՛ ուրեմն այժմ և հանգստացի՛ր, այլ վաղիւ՝ թէ կանխայարոյց լինիս՝ դնա՛ Ցաճար, և Աստուածուհւոյ սեղանոյ վերայ զոհ և ողջակէզ մատո՛, և աղաչէ նորա քաղցրութիւնն, որ ինձ անդորր առնէ։

ՍԱՆԴՈՒԽՏ

Ա՛ռքայ Հայրիկ . . . .

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Գնա՛՝ Որդեակ և հանգի՛ր, գիշերն անցել է, և ես կամենում եմ հանգչիլ. գնա՛ Դստրիկ, և խօսքդ մի՛ երկարացներ։ (Սանդուխտ գնաց։)

ՅԵՂԱՆԱԿ Զ.

(Սանդուխտ առանձին ի դահլիճ իջանի։)

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Ողորմելի՛ Դստրիկ. բովանդակ լայնածաւալ Հայաստան ծայրէ ի ծայր յոյզ և խնդիր արարի, ոչ միայն Ստորին Հայք և Միջագետք՝ որ իմ ժառանգութիւնն է, այլ և վերին Հայք՝ որ Հռոմայեցւոց ձեռքն է մնացել, ուրեք սորա համար արժանաւոր և յարմար փեսայ չգտայ, ո՞րքան և զննեցի։

Լա՛ւ էր Դերենիկ, լաւ էր Սմբատ Ասպետ, հնա՞ր էր տալ նոցա ի հարսնութիւն այսպիսի Դշխոյն։ Յետոյ՝ որդիս որ թագաւորէ՝ Սանդուխտ իւր եղբօր Տիկնաց Տիկնոջ առջևն նաժիշտ պիտի համարվի։

Ափսոսալի չէ՞՝ որ այսպիսի Թագաղնեայ Օրիորդն՝ թագաւորական Գահի պատուանդանի ներքոյ մնայ, ուր՝ ո՞վ գիտէ, թէ որո՞յ դուստրն պիտի ելանէ և բազմի ի գահ։

Քանի՞ Արքայորդիք եկան և տարևոր ժամանակօք դեղերվեցան դրանս, և ձեռնունայն դարձան իւրեանց տեղն. մին անգամ չյաջողեց հաճոյանալ նորա սրտին։ Արշակունեաց մէջ չկան։ Նահապետական տներու մէջ՝ քան զԱրծրունիս, Բագրատունիս, և Ամատունիս՝ ո՞վ կայ այլ ևս բարձր և ճոխ և վեհագն. նորքա տիւ և գիշեր ի միասին

էին. եթէ կամենայր՝ կարէր նոցանէ միումն ձեռն կարկառել. բայց ո՛չ միայն չկամեցաւ, այլ և ինքն նոցա համար հարսներ հնարեց. իբր թէ ինքն ևս հարսնացու օրիորդ չէ. իւր և նոցա մէջ՝ իւր սիրելի օրիորդքն միջնորմն և անջրպետ բարձրացոյց, որ ըստ ամենայնի յոյսերն հատանեն։

Արդեօք սա՝ Հզօր և Ամենակարող ասելով՝ ի՞նչ է կամենում իմացնել. կամ ո՞վ է սորա Հզօրն և Ամենակարողն։ Չլինէ՞ թէ ծածուկ իւր մտքի մէջ մի փեսայ է ընտրել, և նորա անունն է դրել Հզօր և Ամենակարող։ Է՞ր չէ յայտնում մեզ ևս, կամ ինձ, կամ իւր Տիկին Մօրն. ո՞վ պիտի հակառակի նորա կամաց. ո՞վ պիտի ասէ՝ թէ քո սրտի ընտրածն մի՛ կոչեր քեզ փեսայ։ Սանդուխտ այնքան պարզամիտ չէ, որ մի՝ որ և իցէ պճնաշարդ պաճուճապատանքի՝ թէ և մեր ազգապետաց որդւոց մէջէն՝ Հզօր և Ամենակարող անուն տայր, միայն այն պատճառաւ, որ նա յաջողել է սորա սիրտն նուաճել և կարողացել է սորա սէրն և հոգին գրաւել։ Գիտեմ՝ որ Պարսից Արքայորդիք Հզօր և Ամենակարող անուանակոչելոյ չափ արժանաւորութիւն չունին։ Այո՛՝ Արտաշէս Երկրորդի որդին Դարեհ՝ պատանի է շքեղ, քաջ և հանճարեղ, և ժառանգ լայնածաւալ աշխարհին Պարսից Պարթևաց, եթէ սա ինչ պիտի Հզօր և Ամենակարող մականուան ընդունակ համարէր, է՞ր նորա փեսայութիւնն մերժեց, և ցարդ ևս մերժում է։

Ո՛չ Նոնոփար Թագուհին է այժմ ասա, և ո՛չ Վարդանոյշն, դուցէ՞ թէ նոքա իմացած լինին, թէ այս՝ ո՞ր երիտասարդ Արքայորդին է, կամ ո՞ր վեհաշն պատանին է սքողեալ Հզօր և Ամենակարող անուան վարագուրի ներքոյ։ Բայց թէ Նոնոփար գիտենայր՝ ցարդ եօթն անդամ ասած կ'լինէր ինձ, է՞ր պիտի ինձմէն թաքցնէր. նոյնպէս և Վարդանոյշն՝ եթէ իմանայր, անհնա՛ր էր թէ նա Նոնոփարին չյայտնէր։ Ամատունեաց Նահապետի Տիկինն այնպիսի դաստիարակութիւն ընձեռած չէր իւր դստերն, որ նա իմ զաւակին՝ բարեկամութեան պատրուակաւ դաւաճանէր։ Այդ անհնար էր։

Դեռ ևս քանի՞ օր է յայնմ հետէ՝ որ մեր շրջակայ ազգաց իշխանորդիք եկել էին հրաւիրանօք անդրանիկ որդւոյս՝ Նիզակախաղի պայքար կազմել, և Սանդխտոյ փեսայ անուամբ՝ այնքան մեծարանք տեսան իմ դրանն. և նոցանէ ոչ ոք արժանացաւ լսել նորա բերանէն յօժարութեան ինչ նշան։ Ես ևս մինչդեռ ամուրի էի, Ալանաց երկիրն դեսպան երթալով՝ Մօրեղբօրս Աբգարու հրամանաւ, տեսել էի Նոնոփարի գեղեցկութիւնն և սիրահարվել էի. բայց Նոնոփարի հայրն չէր յօժարում տալ ինձ ի հարսնութիւն, որովհետև ես թագաժառանգ չէի, և Աբգարու յաջորդն և ժառանգորդն՝ էր Անան։ Աբգար քանի՞ ազգապետաց դքսերք ինձ համար պատրաստած ունէր ի հարսնութիւն, ես միայն Նոնոփարի անունն էի կոչում Հրաշագեղ և Զբքնաղ Հարսն, առանց Նոնոփար անունն յիշելոյ։ Մնացի ամուրի, մինչև մեռաւ Աբգար։ Երբ Անանէ թագաւորեց Միջագետաց Հայաստանումն՝ ես թագ կապեցի Շաւարշանումն. և Նոնոփար ինձ հարսնացաւ։

Սանդուխտ ևս մէկ պատանւոյ կամ երիտասարդի վերայ երևի՝ աչք է դրել, և անունն չէ յիշում, միայն Հզօր և Ամենակարող կոչելով՝ իւր սրտի խուսնկն է ծխում։ Ո՛վ՝ ո՞րքան խոր է և մութ՝ օրիորդի հոգւոյ խորհուրդն. ո՞վ է կարող նորա հունն և յատակն տեսանել։ Դարձեալ ասում եմ. իրաւի Հզօր է եղել այն փեսայն, որ կարողացել է սորա սրտի սանձն իւր ձեռքն անցուցանել և կզակն ճմլել. յիրաւի Ամենակարող է եղել, որ կարողացել է այնքան թագաւորաց և արքայազանց մէջէն միայն յաղթող հանդիսանալ, և սորա հոգւոյն տիրապետել։

Լաւ է՝ որ վաղիւ յորս երթալոյ ժամանակն՝ հնարիւք բերանէն քաղեմ։ Նա անպիտան սինլիքոր երիտասարդի անձնատուր չէր լինիր. նորա հոգւոյ ընտրածն անշուշտ և իսկապէս ընտիր ոք պիտի լինի. է՞ր թող մեզմէն ծածուկ մնայ։ (Գնաց ննջել։)

ՅԵՂԱՆԱԿ Է·

(Սանդուխտ Գայանակ ՝ Ի՞նչ Դեղ ։)

ՍԱՆԴՈՒԽՏ

Իմ հոգւոյ աչքն լուսաւորողի, որով արժանաւորեցայ տեսանել Աւետարանի Լոյսն, և այն Լուսոյ մէջ գտայ իմ անձկալի փեսայն Յիսուս Քրիստոս, մի համառօտ երգն միտքս եկաւ յանկարծ այն ժամանակ, երբ Հայրս Թադաւորն ասաց «Թէ վաղիւ՝ եթէ արեգակն մեզ պարզ օր բերէ, յորս ելանենք կամ Մակուայ կողմն, կամ դէպ Աւարայրի, ուր որ շատ հաւք և երէք կան։»

Այս էր Թադէոսի երգն, իւր կենաց վերջին աւուրքն։

«Երկիր Հայոց Տուն Հիւսիսոյ չարաբաստիկ,
«Յանկայր Աբգար տալ քեզ վիճակ գերերջանիկ·
«Եւ ի հեռուստ երկրբպագեց այն Հրեշտակին,
«Որում Սրբոքէք երեքսրբրեան երգ հընչէին։
«Այլ դու նորա տոհմին եղեր ըսպանդարան,
«Ցուր քո սպառեաց տուն Աբգարու և գերդաստան։
«Անպարտ արիւն այս նոր Մանկանց Բեթլեհէմի,
«Ի խոր խոցեաց գեղարդախոց սիրտ Միածնի։
«Որ Հինաւուրց անճառ ծնընդեամբ էր ի Հօրէ,
«Էմմանուէլ Մանուկ ծընաւ ի կոյս Մօրէ։
«Աղգաց մէջէն ընտրել էր Իւր Հօտ սեփական,
«Հանդիսացաւ Հովիւ խաչին Իսրայէլեան·
«Սիրեաց անձուկ խորշ աշխարհի ըզՊաղեստին,
«Յեղիպտոսէ անդ եառ հանդիսատ Իւր փարախին։
«Անդ և ինքն իսկ եկաւ ի գիւտ կորուսելոյն,
«Մէջ չբրջմոլիկ անլոյս բաւղաց խոտորելոյն·
«Սիոն նիւթեց Իւր քաջ Հովուին մահ դայլաբար,
«Սուրբն և Հրշոյն ի Քայտ կախվեց անարդաբար։

«Մի քայլափոխ ի Սիոնէ դէպ Գողգոթայ,
«Զիթաստանեայց Սուրբ Լեռներէն առ Հայր երթայ։
«Անտի կամէր առ քեզ փութալ՝ ո՛վ Հայաստան,
«Քո ծոցոյ մէջ հիմնել յաւէժ Իւր Հարսնարան·
«Այլ դու սրրտիդ դուռն աղխեցիր դէմ Միածնին,
«Սուսեր ջընջեց հետք Հաւատոյ և Սուրբ Կրօնին։
«Այն Սուրբ Հաւատ և Սուրբ Կրօն ո՛չ առնեն դարձ,
«Մինչ ո՛չ հասցէ առ Հայր սիրոյդ ձօն փոխադարձ·
«Ի Շաւարշան, և յԱրտիմէդ, յԱւարայրի,
«Զոհ ողջակէզ պատարագեալ յիմ սեղանի։
«Նախ Օրիորդ արքայազուն անհարսնացեալ,
«Ապա կուսան՝ Վեհ փեսայից հարսնախօսեալ·
«Սոքա լիցին Տիգրանուհեայ հանդիսակից,
«Արիական լոյս տալ Աղգին շողեալ յերկնից։
«Իսկ որք ընտիր պատարագօք յԱւարայրի՝
«Լիցին փրկանք Աղգի, Կրօնի՝ տան հայրենի·
«Մանկացուսցեն ընդ Աբգարու՝ զնախկին Տիգրան,
«Խունկ անուշից բուրեսցեն Հօր յաւէժական։

Շաւարշանի բոլորակէզ զոհն ես եմ։ (Ցուր դրեց ա՛ա՛ջի խուլը-ռիան։) Փա՛ռք քեզ՝ Սուրբ, և Հզօր և Անմահ փեսայդ իմ Յիսուս, Որ ո՛չ միայն բացեր հոգւոյս աչքն տեսանել և ճանաչել զքեզ, այլ և այնքան շնորհ պարգևեցիր ինձ, որ ես քո Սուրբ Անունն փառաւորեցի առաջի Թագաւորի և Իշխանաց, և զքեզ միայն՝ Հզօր և Ամենակարող դաւանեցայ, որով և հրաւիրեցի իմ գլխոյս վերայ այն անթառամ պսակն, որոյ փոխանակ ինձ ամենայն ժամանակ կարկառում էին թառամելի հարսնութեան փունջերն. և իմանալով քո՝ ինձ համար պատրաստեալ յաւէժական Հարսանեաց ուրախութեան վայելչութիւնն՝ քեզ աղերսեցի, որ իմ արիւնս հեղեալ ի սեղան քո՝ չտեսանեն դորովագութ Մայրս Նոնուփար Թագուհին, և աննենդ սիրով ինձ հետ կապեալ մեղկասիրտ օրիորդն Վարդանոյշ, որ չմոր-

մոքին. և Դու՝ Տէ՛ր իմ Յիսուս, այնպէս անօրինեցիր, որ Մայրս հրաւիրվեցաւ այնպիսի տեղ, ուր իւր որդիական պարտքն պիտի հատուցանէ. և սրտակից բարեկամս գնաց իւր անձկալի փեսայի հետ զուարճանալ. որ երբ լսէ իմ վիճակս՝ թախծանաց զոհ չլինի. (այլ երկոտին և յեր ժամանակաց կոտրան իմ բերեալմանս յոգել ի-բեռանց տաղտկի արտասուս։) Եւ այսպէս հաստատուեցայ իմ յուսոյս վերայ, որ վաղիւ ընդ առաւօտն արեգակն ծագեալ՝ ոչ թէ պիտի բերէ պարզ օր՝ որսոց զբօսանաց համար, այլ օր աներեկ տուընջեան, յորում ես քեզ հարսնացեալ՝ պիտի քեզ հետ յաւիտենական ուրախութեամբ միաւորվիմ և թագաւորեմ՝ հոգւոյս փափագելի և տենչալի փեսայ իմ Յիսուս։

Արտիմէդի սեղանոյ պատարագներն ես պիտի լինին ինձ նման օրիորդք, որ միշտ երգում էինք Հայկերգի մէջ, բայց ինչպէս ա՛յն չէինք հասկանում, նոյնպէս և այս, որ այն քառասնաթիւ Օրիորդաց Նախընթացն ես եմ։ Փառք քո շնորհաց և ողորմութեան Յի՛սուս իմ սիրական փեսայ, Որ ինձ այնպիսի փառաւոր երամոյ Պարագլուխ լինիլ ես շնորհել։ Ամենասիրելի փեսայ իմ Քրի՛ստոս, եթէ Դու կամենաս՝ կարող ես ծագել լոյս իմ հոգւոյս մէջ, որ ես իմանամ՝ թէ իմ երեսուն և ինն ընկերակիցք ո՞ւր են։

Յիսուս իմ Աստուած. այս՝ ի՞նչ նոր սքանչելիք։ Տեսնում եմ՝ որ քո Թաթն, Որ երբեմն բաղդասար Թագաւորի խրախճանի ժամանակն՝ Բաբիլոնի մէջ գրում էր անթարգմանելի առեղծանելիքն, դարձեալ իմ հոգւոյս մէջ՝ քո խաչելութեան պատուանդանի նման մի տախտակի վերայ գրում է Աստոր տառերով, բայց Հայերէն բառերով, և ես ընթեռնլով՝ իմանում եմ, որ Արտիմէդի զոհերն պիտի լինին երեսուն և եօթն թուով, և ես նոցա հետ՝ երեսուն և ութ. այլ նոքա ահա՛ աղաւնեաց նման երամովին թեթևաբեռն մարմնով օդաճեմ թռուցեալ արևմուտքէն՝ թեւապարում են դէպ յԱրտիմէդ։ Նոքօք՝ պարզ և յայտնի ցուցանում ես՝ իմ անձկալի փեսայ Յիսուս, որ ինչպէս նախ

և առաջ մեր Ազգի մէջ Տիգրանուհին ցոյց տուեց եղբայրսիրութեամբ՝ Ազգասիրութիւն և Հայրենասիրութիւն, և ինչպէս Նոյի տան մէջ առաջին լոյսն վառեց Յարեթի հարսն Զարմանազան. նոյնպէս դարձեալ մեր Ազգի մէջ Ազգասիրութեան և Հայրենասիրութեան ճրագն պիտի վառեն Օրիորդք և Տիկնայք. և ազգային լուսաւորութեան բոցն՝ նոցա սատարութեամբ պիտի ցոլանայ մեր անտերունչ Ազգի և Հայրենեաց մէջ։

Մեր ընկերակից Քառասնից մէջէն Մին պիտի երթայ այն Լեառն՝ ուր երախտապարգև բնութիւնն բղխում է Ջերմիկ Ջուր առողջարար, և այն տեղ դնէ հիմն մի այնպիսի Տան, ուր՝ երբ մեր համազգիք իւրեանց Հայրենիքէն, մանաւանդ Արտիմէդէն զրկուին, և Սմբատայ և Սենեքերիմայ ժառանգութենէն պանդխտանան, ա՛նդ գտնեն Նոր Հայրենիք։

Նոցա ընկերակից և թեւակից, և այն անջատեալ Միոյն ուղեկից, Մելքիսեդեկի կարգակից, և Նախավկայ Մարտիրոսին անուանակից, պիտի ամենեցունս հանգոյն զոհ մատչի այն ջերմաջուր բղխող Լերին վերայ, և անդ նորա յիշատակի աղագաւ կառուցեալ Վկայարանն լինի հանգիստ այնպիսի մաքրասուն և հրեշտակակրօն Օրիորդաց, որ քո խաչն բարձեալ՝ ինձ նման, և իմ երեսուն և եօթն ընկերակցաց նման, և հանգոյն այն Միոյն՝ որ ջերմաջուր Լերին վերայ իմ հայրենակցաց համար Նոր Հայրենիք պիտի հիմնարկէ, հանդերձեալ են քեզ հարսնանալ, իւրեանց կեանքն, իւրեանց սիրտն, և իւրեանց հոգին քեզ միայն նուիրեն՝ կենցաղական ամենայն ունայնութենէն հրաժարեալ, և աշխարհ և ամենայն վայելչութիւնքն նորա ուրացեալ, քո փեսայութեան սիրահարին, և միշտ վառեալ լապտերօք՝ քո գալստեան սպասեն։

Տէր Յիսուս՝ տեսնում եմ, որ Արտիմէդի մէջ՝ այն երեսուն և եօթն ընկերակիցքս կարմիր կարմիր վարդից փունջերի նման գտել են Յակոբայ սանդուխքն և յերկինս են

սլանում, և ինձ պաշակից լինելով՝ անմարմին զուարթնոց հետ թևակցեալ, այն Հինաւուրցն՝ Որ իմ փեսայն է՝ հրաւիրում են ի Հարսնարանն Իւր, որ ի սէր Միոյ ինձ նման փառաշնեայ Օրիորդի, նորա հանդուսարանի առընթեր դնէ Իւր Խորանն՝ և ահա՛ տեսնում եմ ի հեռուստ պարզ՝ որ էջ Միածինդ, և քո Հարսնարանն լուսակառոյց շինվեցաւ անդ, ուր հաստատեալ կայր ստորոտ սանդղոցն. և իմ փեսայդ Միածինդ՝ հրաւէր ես անում ինձ դէպ այն Հարսնարանն, և ասում ես, ԱՑՍ Է ՀԱՆԴԻՍՏ ԻՄ ՑԱՒԻՏԵԱՆՆ ՑԱՒԻՏԵՆԻՑ, ԱՍՏ ԲՆԱԿԵՑԱՑՑ, ԶԻ ՀԱՃԵՑԱՑ ԸՆԴ ՍԱ, ԵՒ ԴՈՒ ԱՌ ԻՍ ՓՈՒԹԱ՛ ՑԱՑՍ ՆՈՐ ԵԴԵՄ։

Միածին փեսա՛յ իմ Յիսուս, քո նոյն հրաշափառ Անվն, Որոյ վերայ տեսնում եմ և բևեռախոց վէրքն արիւնաթաթաւ, դարձեալ գրում է Աւարայրոյ հանդերձեալքն. հաղարաւոր և բիւրաւոր Հայազգիք կան համախումբ, որք փոխանակ վարժնականիչ դրօշիկ Անահտայ, որ ոտնակոխ եղծին իմ հետևորդ Երեսուն և եօթն ընկերակիցք՝ իւր բնիկ Արտիմէդ քաղաքի մէջ, քո խաչանիշ դրօշն ամբարձեալ շուրջ պատեցին այն երկնահաս սանդուղքն, և սկսան վերաթևել դէպ առ քեզ և դէպ առ իս և դէպ առ Երեսուն և եօթն ընկերակիցսն իմ. իսկ այն բիւրաւորաց Առաջնորդն քաջ և դիւցազնեայ Ծերունին իւր դրօշու վերայ տանում է այս վերնագիրն լուսափայլ տառերով գրած. Հայր և Դուստր. Վարդ և Շուշան. Վարդ՝ յԱւարայրի, և Շուշան ի Ջերմուկն։ Իմանում եմ՝ Յիսուս Միածին, որ Սա ևս պիտի մտանէ մեր աղաւներամ պարուն թեւակցութիւն. որով և հանդերձեալ է լրանալ թիւ քառասնից։

Սա ևս պիտի պարծանք լինի մեր Աղգին։ Շաւարշանի Սանդուխտն՝ փառք Օրիորդաց, Արտիմէդի կուսանն՝ պսակ Հարսնախօսելոց, Աւարայրի Վարդէն ընձիւղեալ Ջերմուկի Շուշանն՝ պարծանք Հայազգի Տիկնանց՝ դստերաց Տիգրանուհեայ։

Գոհանամ զքէն Միածին Յիսուս, իմ Հզօր և Ամենակարող փեսայ, որ այս դուշնաքեայ միջոցումն այսքան լուսաւորեցիր իմ հոգին. մի՛ թողուր զիս կարօտ և զուրկ քո պաշտպանութենէն. քաջայո՛յս եմ՝ որ վաղիւ յայս ժամ՝ ո՛վ Սուրբ, Հզօր և Անմահ փեսայ, քեզ հետ լինիմ միացեալ, կուսական մաքուր արեամբ պսակեալ, և անեղրական Հարսնարանիդ մէջ ընդ աջմէ քումմէ բազմեալ՝ Յո՛յսդ և Ակնկալութիւնդ ամենեցուն, քեզ՝ երկրպագութիւն հոգւոյս՝ Որ ես Տէր զօրութեանց։

ՎԱՐԱԳՈՅՐ ԵՐՐՈՐԴ

(Աբեայական Դահլեժն Սանդուխտայ, որ համախմբեալ կան բաղմութիւն Նոյ հաղթողաց և Ադամապետաց, Իշխանաց և Մեծաց, Զօրավարաց և Քրմաց։ Քրմապետն Քաջայ Նոպեալ կայ առանձին ի գահաւորակի էրդամ, որպէս Նոպէ է պատրաստ է ժամ ընդունելութեան, և զգեցեալ է զարդարանք Քրմապետութեան։ Մոտանէ յոտեան Սանդուխտ՝ հանելով բանդէ, և ածեալ յերկոսին Սենեկապետաց և է բաղմութենէ Քրմաց՝ յետոյ յետոյ կոպեալ։)

ՍԱՆԱՏՐՈՒԿ (կոբեկցութեամբ.)

Ուստի՞ եկար՝ Դստրիկ իմ սիրուն. այսքան բաղմութիւն Հայազգի Աւագորերոյն հաւաքուել են՝ հրաւիրանօք Քարձամ Քրմապետի և այլոց առաջնակարգ Քրմաց՝ այս ատեան՝ իմ և քո վերայ դատաստան անելոյ համար, որ լսեն քո բերանէն հերքումն այն ամբարիշտ ամբաստանութեանց՝ ինչ որ քո վերայ յարմարեցուցանելով բարդել է Քրմապետն։

ՍԱՆԴՈՒԽՏ

Ես այժմ բանտէն եկայ՝ Հայրիկ իմ Արքայ. դեռ չկայր կէս գիշերոյ, որ Քուրմերն եկան, խորտակեցին իմ սենեկի դռներն, և որովհետև դեռ ևս անկողին մտանելոյ պատճառաւ մերկացած չէի՝ ձեռքերս յետս կապեցին, իմ աղօթարանն կործանեցին, և տարան մահապարտից գրոյ մէջ բանտարկեցին. ես պատրաստ եմ ալ պատասխան ամենայն ամբաստանութեանց՝ ինչ որ կամի լսել բերնէս ժողովրդեան բաղմութիւնն։

ՔՐՄԱՊԵՏ

Հզօր և Ամենակարող կայ՝ ասացիր, բայց այն քո Աստուածուհին չէ, այլ այն Աստուածն է՝ Որոյ ստուերական օրինակ Հեթանոսաց Բանաստեղծներու հոգին էր գուշակել, և ասել էր՝ թէ երկինքէն է եկել և Իմաստութեան Աստուածուհի է։ Նա՝ Աստուածուհի չէ, այլ Աստուած է և ասվում է՝ Իմաստութիւն Հօր։ Ճշմարիտ Հզօրն և միայն Ամենակարողն Նա է։

ՍԱՆԴՈՒԽՏ

Այո՛՝ այդպէս է և այդպէ՛ս խօսեցայ, և դարձեալ այդպէս եմ ասում։ Կայ Աստուած, բայց չկայ Աստուածուհի, և այն Անահիտ՝ որ դուք էք պաշտում, և Աստուածուհի էք անուանում, իսպառ սո՛ւտ է. երբէք Անահիտ Աստուած կամ Աստուածուհի եղած չէ. գուցէ՝ թէ մարդ իսկ եղած չլինի։ Թունաց Բանաստեղծներն՝ առանց ամաչելոյ իւրեանց Աստուածներուն այնպիսի կիրքեր են ընծայել, որն որ մարդիկ իսկ՝ իւրեանց ամօթ կ'համարին։ Զեղ վկայ թող լինի Վարդավառի Տօնի ոճիրներն։ Քան զպոռնկութիւնն, և քան զշնութիւնն՝ թէ այր մարդոյ և թէ կին մարդոյ համար՝ աւելի ամօթալի ի՞նչ կայ։

Թունաց Բանաստեղծներն իւրեանց Աստուածներուն՝ որպէս թէ գովութիւն տալով ասել են, թէ Արամազդ մի Լատոն անունով օրիորդ է առևանգել, և նորամէն երկու պոռնկորդիք են ծնել, մին արու և միւսն էգ. արուն՝ Ապողոն, որ Իմաստութեան և Գիտութեան և Ազատական Արհեստներու Աստուած է. իսկ էգն՝ Դիանա, որ Որսորդութեան, Ծննդականութեան և Պարկեշտութեան Աստուածուհի է։ Ապողոն՝ օրինակ է Արեգական, և Դիանա՝ օրինակ է Լուսնի՝ որ միայն գիշերն է երևում, որովհետև ամօթխած է, իւր ծնունդէն է ամաչում։ Հայերն՝ Դիանա՝ յետ են դարձուցել, և կոչել են Անահիտ. նա ունի և Արտեմիս անուն, և նորա անուամբ կոչուել է մեր հնագոյն քաղաքաց մին Արտիմէտ, որ վերին Հայաստանումն է, և այժմ Հռոմայեցւոց ձեռին, բայց յետ քանի դարուց պիտի նորոգվի, և նորա մէջ Իմաստութիւն Հօր կոչված

Հզօր և Ամենակարող Միածինն՝ առ ոտն կոխէ ձեր Անահտայ լուսապսակն, և անդ շինէ իւր Հարսնարանն, և անդ տօնախմբէ իւր Հարսանիքն, և ես լինիմ Նորա Հարսն։ Արտիմէդ քաղաքն՝ Քասաղ գետոյ վերայ է, ինչպէս Հայկերդի մէջ երդած է։ Ինչպէս ես այժմ կամ ձեր առջեւն, իմ Երեսուն և եօթն ընկերակիցք քանի հարիւր տարի յետոյ պիտի նոյնպէս կանգնին. և ինչ որ այսօր ինձ պիտի լինի, նոցա ևս նոյնն պիտի լինի։ Ինձ՝ իմ Հայրն կուտայ ճանապարհ այս աշխարհքէն ելանել, և դիմել այն Հզօր և Ամենակարող փեսայի դիրկն, բայց այն Երեսուն և եօթանց մէջ պահուած անզուգական մարգարիտին՝ պիտի լայն ճանապարհ բանայ իւր Սիրահար փեսայն. բայց երկուսիս ևս տեղափոխութեան պատճառ կ՝լինի մի և նոյն շարժառիթն։

ԳՐՄԱՊԵՏՆ (Ն.Մ.Ր. ԱՆԵԼՎ ՍՔՈԻԻՆ.)

Սանդուխտ Դշխոյ, դու ասում ես՝ թէ Անահիտ չէ՛ Աստուածուհի, չէ՛ Հզօր և Ամենակարող, ապա ո՞վ է Հզօրն և Ամենակարողն։

ՍԱՆԴՈՒԽՏ

Միայն ես չեմ ասում թէ Անահիտն չէ Ամենակարող, այլ դուք ևս էք ասում։ Դուք ասում էք՝ թէ Անահիտ՝ Որսորդութեան և Ծննդականաց Աստուածուհի է, իսկ Ապողոնն դիտութեան. Աթէնասն՝ իմաստութեան. Արամազդն՝ կայծականց, որ Հեփեստոս պիտի դարբնէ, ապա թէ ո՛չ՝ Արամազդ առանց կայծականց կ՝մնայ. Պոսիդոն ծովուց Աստուածն է կ՝ասէք, Սպանդարամետն՝ Դժոխոց. եթէ Սպանդարամետ մնայի ծով, Պոսիդոն նորան ծովահեղձոյց կ՝անէ, իսկ թէ Պոսիդոն դնայ դժոխք, Սպանդարամետն նորան կ՝բանտարկէ, և կերբերոս եռագլխի շան պահ կուտայ. ձեր մէկ Աստուածն ևս Ամենակարող չէ, որպէս դուք էք ասում. իւրաքանչիւր՝ մի մի մասնագետ են, այնքան Հզօր՝ որ իւրեանց անձին օգնել չեն կարող. Տրոյացւոց պատերազմի մէջ՝ մեր Զարմայր Նահապետն՝ ո՞վ գիտէ՝ թէ քանի՞ Աստուածուհեաց քինթն է կտրել, և քանի՞ Աստուած առանց ձեռքի կամ առանց ոտքի, կամ ականջն կտրած վախել են Յունաստանի կողմն՝ արիւնն ծլծլալով։

ԳՐՄԱՊԵՏ (ԱՆՀԱՆԴՈՒՐԺ.)

Սանդուխտ Դշխոյ. դու ասում ես թէ Անահիտ չէ Աստուածուհի, ապա ո՞վ է ճշմարիտ Աստուածն կամ Աստուածուհին։

ՍԱՆԴՈՒԽՏ

Ես չեմ ասում միայն՝ թէ Անահիտ Աստուածուհի չէ, այլ և ընդ նմին ասել եմ և ասում եմ, թէ Աստուածուհիք չկան իսպառ. այն Կրօնի վարդապետութեամբ՝ որոյ ես եմ դաւանող, մեր Մարդացեալ Աստուծոյ Ծնողն, Միածին Որդւոյ Մայրն, Աստուածածին ենք դաւանում, և ո՛չ Աստուածուհի։ Աստուածուհի չկայ։ Այլ մի միայն Աստուած կայ, և Աստուածորդի կայ. և այն Աստուածն է Ամենասուրբ Երրորդութիւնն՝ Հայր և Որդի և Հոգի Սուրբ, Որ Աստուածորդին իւր մարդանալովն յայտնեց աշխարհի, և Որ՝ Թադէոս քարոզում էր Հայաստան, որպէս ականատես, և ասում էր՝ թէ Որդին մարդացաւ մեր փրկութեան համար. և Որոյ անուամբ Աբգար բժշկվեցաւ, և Որոյ Անձեռագործ Պատկերն Անանէի ժամանակն՝ Եդեսիա՝ առերևոյթ արարին։ Ահա սա է Աստուածն։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (ՈՒ.Ի.ԱՆՈՒ.)

Իմ քաղցր և անուշակ Դստրիկ՝ Սանդուխտ Դշխոյ. ահա՛ քո բերանով ես խոստովանում, որ Քարձամ Գրմապետի ամբաստանութիւնքն տարապարտուց չէին։ Ես էի ինանիր արդարացնում քո անձն, մինչ նա պնդում էր՝ թէ Սանդուխտ Դշխոյն Թադէոսի աշակերտ է։ Դու մեր ազգային Կրօնն ուրացե՞լ ես։ Չգիտե՞ս՝ որ ես Թադէոսի գլուխն

կորել տուի։ Հարկն պահանջում է, որ քո գլուխն ևս կորել տամ։ Ո՛րդեակ, է՞ր չես խնայում քո միամօրութիւնն. չգիտե՞ս որ քան զքեզ աւելի դուստր չունիմ։

ՍԱՆԴՈՒԽՏ

Ցանցաւոր եմ՝ Հա՛յրիկ, որ Թադէոսի հետ դաւանակից և մահակից չեղէ, ծածկեցի իմ Հաւատն, ուշացուցի իմ վկայութեան և փառաւորութեան Օրն, և իմ Հզօր և Անմահ փեսայի ձայնին ծուլութեամբ ականջս բացի։ Այլ փառք Նորա երկայնմտութեան, որ Նա իմ հանդէպ չփակեց խսպառ իւր գթութեան դուռն, և գէթ այսօր արժանացոյց, իմ անձն իւր փափագելի Հարսնութեան։ Բայց և Դու միտքդ բեր՝ Ա՛ռքայ Հայրիկ, որ մկրտված էիր. քեզ ևս Թադէոս Առաքեալն էր ընձեռել Սրբոյ Մկրտութեան Աւազանի խորհրդոյ ջուրն. լուացվել էիր հոգևոր բաղանիսի մէջ. երեք տարի Յիսուսի փոքրիկ Հօտի մէջ Դառն էիր, յետոյ կամաւ դառաւ քրմաց խաղալիկ. ուրացար Սուրբ Կրօնն, որոյ մէջ համոզուած չէիր. անարգեցիր Աւազանի մաքրութիւնն, և վերստին դարձար կռապաշտութեան նախկին զազրալի տիղմն, ընդդէմ որոյ բողոքում է Թադէոս իւր Շրջաբերական Նամակի մէջ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Զգիտե՞ս՝ Ո՛րդեակ, որ եթէ այդպէս չվարվէի, Ազգն չէր ընդուներ իմ Թագաւորութիւնն, և դու Դշխոյ չէիր լիներ։

ՍԱՆԴՈՒԽՏ

Եօթնամեայ անբուժելի ցաւով վարակեալ Աբգար՝ այս Սուրբ Կրօնն հրաւիրեց, և Ազգն ընդունեց և հնազանդեցաւ, Դու Հայրիկ՝ երիտասարդ քաջ և առողջ՝ մի քանի Թերամիտներու խօսքէն համոզուեցար, և այդ արիր. և միթէ՞ այդ յանցանացդ պատուհասն չէ այս, որ այժմ քրմապետն համարձակվել է ամբոխ կուտել գլխոյդ, և դատասխան կարգել քո և իմ վերայ համանգամայն։ Ի՞նչ օգուտ եղև ինձ Դշխոյ լինելս, երբ սենեկէս մինչ ի բանտ մահապարտից եղև պիտոյ քայլափոխ մի, և այժմ կապեալ կամ յատենի։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Այդ ամենայն այնպիսի չարիք չեն, որ հնար չլինի ուղղել. դու տո՛ւր երկրպագութիւն Անահտական դից, մնացեալն իմ կամացս թո՛ղ ապաստան։

ՍԱՆԴՈՒԽՏ

Հա՛յրիկ, միթէ՞ այս չարեաց արմատն երեկեան խօսակցութեան մէջ պիտի որոնենք։ Աբգարու գլխոյ ապարօշն պատառեցիր. յետոյ երբ եկար Եդեսիա՝ որ Աբգարու Թագաւորութեան միւս մասին ևս տիրանաս, Եդեսացիք՝ որ Անանէի ուրացութենէն զզուել էին, քաղաքի դռներն փակեցին, մինչև երդմամբ չխոստացար՝ թէ նոցա Կրօնին չունիս հակառակիլ՝ չբացին։ Բայց երբ քաղաք մտար՝ երդմանդ ստեցիր, և ո՛չ միայն այն Սուրբ Կրօնն բնաջինջ արիր, այլև Աբգարու տունն և Անանէի ցեղն սուր անցուցիր, և այնուհետև միշտ գանկատ ես անում, թէ այն արիւնն է, որ քեզ չէ թուլատրում հանգիստ կեանք վայելել։ Հա՛յրիկ՝ այն արիւնն է, որ այժմ իմ զոհն է պահանջում, և հնար չկայ ազատիլ։ Այլ իմ արիւնս միայն սկիզբն է այն արեան՝ որ պիտի բաղում անգամ խոխոջայ քո գերդաստանի մէջ, որ թէ չլիներ արեամբ շաղախեալ՝ դուցէ թէ արժանի լիներ աւելի բարեբաստիկ վիճակի։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Անցեալ անցքն՝ ինչ որ պատմեցիր՝ ճշմարիտ են, Սիրական իմ Դստրիկ, բայց այժմ իմ իշխանքն և իմ Մեծամեծքն՝ որ իմ Թագաւորութեան յեցուկքն են և հաստա-

բանք, ահա՛ համախմբել են և պահանջում են՝ որ դու զոհ մատուցանես մեր Ազգային Անահիտ Աստուածուհւոյն իւր սեղանոյ վերայ։

ՍԱՆԴՈՒԽՏ

Տէր իմ Արքայ Հա՛յրիկ, ես երեկ, երբ Քրմապետի Ծերոյ խօսքերն հերքեցի սակաւ բանիւք, և Յիսուսի Քրիստոսի Աստուածութիւնն դաւանեցի, իմացայ՝ որ պիտի մահու դատապարտութիւն ստանամ. վասն որոյ այս գիշեր դեռ ևս նոր էր մթնացել, որ երբ իմ սենեկիս մէջ՝ իմ պաշտեալ Խաչելութեան առջևն կանթեղն վառեցի, և ծունր դրի, և աղաչեցի, որ եթէ իմ Ազգի և Հայրենեաց փրկութեան համար իմ արեան հեղումն հարկաւոր է, թող այն՝ Սուրբ, Հզօր և Անմահ փեսայն իմ Յիսուս՝ իմ Հօր ձեռնէն ընդունի, ինչպէս երբեմն ընդունել է Յեփթայէի ձեռքէն իւր միամօր դստեր արիւնն. և յետոյ այս ևս խնդրեցի, որ գորովասիրտ Մայրս Նոնոփար Թագուհին, և իմ սրտակից բարեկամ Վարդանոյշ Օրիորդն՝ իմ արեան ճապաղիքն չտեսնեն. և այս իսկ գիշեր՝ երկոքին ևս քո հրամանաւ՝ Ամենասիրելի Հայրիկ՝ Շաւարշանէն հեռացան, և ո՞վ գիտէ՝ թէ այժմ ո՞ւր են։ Այս երկու նշաններն՝ յայտնի դուշակութիւն են, որ իմ փեսայն եկել է, և սպասում է ինձ, որ ես մտնեմ երկնային Հարսնարանն և նորա հետ միաւորվիմ։ Ես յոյս ունիմ որ այսօր՝ իսկ այն ժամն, երբ ցերեկն Քրմապետի առջև դաւանեցայ իմ փեսայի անունն՝ Հզօր և Ամենակարող Աստուած, նոյն հոգւոյս ընտրեալ և անձկալի փեսայիս հարսնանամ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Աբրահամ.)

Ո՞րքան դառն է ինձ այդ բաժակն՝ որ կարկառում ես ինձ, և հարկադրում ես՝ որ խմեմ, և քամեմ, Սիրական Դստրիկս. Է՞ր չես խնայում քո տասնևեօթնամեայ զուարթածաղիկ տիոդ՝ որ պիտի չարաչար մահուամբ հոգ

մանի։ Է՞ր չես ափսոսում այն հրաշագեղ դիտակիդ, որ դահիճի սրով պիտի դալկահար դեղնի։ Է՞ր չես ողորմում քո Մօրն, որ քեզ տուել է այդ երջանիկ կեանքն։ Սանդուխտ (Նոնոնոփար ողբալով) Է՞ր չես ողորմում ինձ, որ պիտի քեզմէն անզաւակելով՝ մնամ աշխարհի երեսին սևասրտած՝ քանի որ կենդանի մնամ։ Նայէ՛ քո շրջակայքն և տե՛ս՝ թէ քանի՞ աչք է քո աղագաւ արտասուք թափում. քանի՞ երես է՝ քո վերայ մորմոքելով՝ արտասուաց ցօղով թաց լինում։

ՍԱՆԴՈՒԽՏ

Հա՛յրիկ՝ ինչի՞ ես իմ տասնևեօթամեայ հասակս յիշում, մինչ իմ առջևս յաւիտենականութեան դռներն են բացվում։ Ինչի՞ ես իմ հողանալի մարմնոյն ափսոսում, մինչ ինձ անմահութիւնն է սպասում։ Է՞ր ես Մօրս անուամբ ադիքս կիզում և երիկամունքս մորմոքում, միթէ Մօրս ծոցն քան զերկինս լա՞յն է և քան զԴրախտն վերնագաւառին՝ փափուկ։ Է՞ր ես քո հայրագութ գորովդ յողոք արկանում, միթէ չգիտե՞մ՝ որ այսօր իսկ պիտի Հայր իմ և Մայր իմ թողուն զիս, և Տէր իմ պիտի ընդունի զիս։ Է՞ր ես շրջակայ իշխանաց բազմութեան արտասուացն մատնացոյց լինում, միթէ սոցա բազմութիւնն աւելի՞ է քան զՀրեշտակացն անմարմին զօրաց հոյլն, որք ահա՛ ընդ առաջ են ելել ինձ՝ Հա՛յրիկ իմ Թագաւոր։ Երանի՞՝ թէ Դու ևս տեսանէիր այն՝ ինչ որ ես եմ այժմ տեսանում։

ՔՐՄԱՊԵՏ

Ի՞նչ ես տեսանում Դչխոյ. Է՞ր միայն դու ես տեսանում, և մենք՝ ո՛չ։ Դիցուք թէ ես ծեր իմ, և աչացս զօրութիւնն նուազել է. տես թէ քանի՞ հարիւր հոգիք կան, դոնէ՞ թող մին ևս քեզ նման տեսանէր։

ՍԱՆԴՈՒԽՏ

Ո՞րքան և նուազած լինի աչացդ տեսութեան ոյժն,

բայց թէ ճանապարհին մի ոսկի դահեկան ընկած լինի, շուտ կ'տեսանես և կ'առնուս. եթէ յոգնախումբ ամբոխի մէջ մեծատուն մի տեսանես, շուտ կ'ճանաչես և կ'սկսիս շողոքորթել. եթէ հաղարաւոր կռապաշտից մէջ մէկ ծածուկ քրիստոնեայ տեսանես, արծուի նման կ'յարձակիս և կ'մասնես դահճաց. եթէ մէկ բարեպաշտ աղքատ առջևդ կանգնած լինի, բնաւ չես տեսներ, որովհետև նորանէ շահ չկայ. այլ ճշմարիտ ես ասում, թէ ինչ որ ես եմ տեսանում՝ ո՛չ դու և ոչ այս բազմութիւնն՝ որ Անահտական մոլար պաշտօնի աղջամուղջի մէջ կայք, չէ՛ք յաջողէր տեսանել, մինչև չփափագիք տեսանել, մինչև ձեր աչքերն չլուանաք Ջրով Մկրտութեան, ձեր աչքերն եմ ասում, որ Անահտական ղոհի ճարպովն է օծված. որովհետև իմ տեսածներն երևում են միայն նոցա՝ որք նորա յետևէն չրջելով՝ որոնում են, և գտնում և տեսնում։ Իմ Սուրբ, Հզօր և Անմահ փեսայի երեսն՝ է՞ր պիտի տեսանես դու՝ ո՛վ Քրմապետ Ծեր, ո՞չ ապաքէն Անահտական ողջակիզաց ճենճերոյ ծխովն մառախլապատ են եղել ոչ միայն մարմնոյդ, այլ և հոգւոյդ աչքն։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Սիրական Դստրիկ. է՞ր առաջ չէիր ասում թէ ունիս այդպիսի փեսայ՝ որ Սուրբ է, Հզօր է, և Անմահ. է՞ր չէիր բերում Դարպաս՝ որ մենք ևս սիրէինք։

ՍԱՆԴՈՒԽՏ

Նա՝ դեռ ևս ինձ անծանօթ էր՝ որ ձեզ հիւր եկաւ, ձեր Դարպասի մէջ իջևան արաւ և երեք տարի ձեր մէջ բնակվեցաւ. բայց զկնի այնորիկ դուք Նորա գանձերն կողոպտեցիք և հալածեցիք, Նորա բնակարանն կործանեցիք, Նորա բարեկամներն չարչարեցիք և վերջապէս Նորա հաւատարիմ ծառային և եղբօր գլխատեցիք։ Ես Նորան հանդիպեցայ այն ժամանակ՝ մինչ Նա հարուածեալ վախ-

չում էր, Հայաստանի մէջ դլուխն վայր դնելոյ տեղ չէ դտանելով. ես Նորա անձն սիրեցի, Հոգւոյս մէջ Նորա համար տաղաւար կառուցի, իմ փեսայն այն Ցիսուսն է, Որոյ Անունն միշտ անարդեալ է ձեր մէջ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Փոշտանով.)

Սանդուխտ Դստրիկ իմ նաղելի, աննրելի յանցանք է՝ որ քո սրտի մէջ հիւրընկալութիւն գտնէ այն անձն՝ որ իմով հրամանաւ է տարագրեալ։ Դու՝ մինչդեռ իմ անձին ատելոյն՝ քո սրտի մէջ թագաստեան տեղ ես ընձեռում՝ չե՛ս ինձ բարեկամ։ Մինչդեռ մեր ազգային կրօնի հակառակորդին ասպնջականութիւն ես անում, չե՛ս ազգասէր։ Մինչդեռ իմ և ազգի պաշտեալ Աստուածուհւոյ փառքն ոտնակոխ անողին՝ տուած ունիս քո հոգւոյ սէրն, չե՛ս Հայրենասէր։ Գիտե՞ս որ թագաւորի թշնամւոյ, Ազգի դարանակալի և Հայրենեաց ական հատանողի յանցանքն՝ մահապարտութիւն է։

ՍԱՆԴՈՒԽՏ

Ես մահապարտ եմ այն օրէն սկսեալ, որ օր Մայրս ինձ կեանք պարգևեց, և որ օր Քեզ աւետիս տալով ասացին, թէ աչքդ ի լոյս՝ Քեզ Թագուհիդ դուստր ծնաւ, և անունն դրին Սանդուխտ։ Այն օրէն սկսած քո Սանդուխտն դէպ ի մահ էր գնում և տասնևեօթնամեայ հասակի մէջ ժամանեց նշանադրեալ կէտն։ Եթէ եօթանասուն և եօթնամեայ տիոց մէջն հասանէր, մի և նոյն էր, մահապարտ էր, և պիտի անշուշտ մեռանէր։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Ցոլտ անկեալ.)

Լաւ չէ՞ որ՝ Ո՛րդեակ իմ չքնաղ, հնազանդիս քո Հայրենի երկրի օրինաց և աւանդութեանց Նախնեաց Ազգիդ, և պաշտես այն Աստուածն՝ որ ամեն համազգիք են պաշտում. և հանես մոքէդ այն անհասանելի բաներն՝ ինչ որ Թադէոսն էր քարոզում։ Եթէ իւր քարոզած Աստուածն

կարող էր փրկութիւն տալ, նախ՝ իւր անձն պիտի պահ-
պաներ որ չմատնէր Հրէից ձեռն, և ապա այնպէս տնօ-
րինէր՝ որ իւր հաւատարիմ ծառայի Թադէոսի գլուխն
չհանդիպէր իմ սրոյն, կամ այժմ Քրմաց ջոլիրն չհամար-
ձակէր ձեռն մխել քեզ։ Տե՛ս՝ Ո՛րդեակ, ես չունիմ այն-
քան ոյժ՝ որ քո կեանքն իմ արքայական իշխանութեամբ
մահէն ազատեմ. դու յանցաւոր ես ընդդէմ Ազգային
Կրօնի, քո արիւնն պիտի հեղու դահիճն։

ՍԱՆԴՈՒԽՏ

Ա՛ռքայ Հայրիկ. Անան Եդեսիոյ Թագաւորն մահա-
պարտ չէր, և դահիճ չմօտեցաւ նորան, այլ պորփիւր
սիւնն չզօրե՞ց դահճի դերն կատարել Այլ այսօր իմ Հար-
սանիքն է։ Հարսին համար սայլեր են բերում, սայլերուն՝
ձիեր և ջորիներ են լծվում։ Իմ Հարսնութեան սայլին
դահիճ պիտի լծվի։ Ո՞չ ապաքէն դահիճն մարդ է, և
լաւ է քան զամենն ձիս և ջորիս։

Ես յաղթանակաւ պիտի մտանեմ ի Մայրաքաղաքն ար-
քայութեան երկնից։ Հռոմայեցւոց յաղթական Զօրավարք
և կայսերք իւրեանց յաղթանակի կառքին զանազան գա-
զաններ էին լծում։ Իմ կառքին պիտի դահիճ լծվի։ Դա-
հիճն մարդ է, և լաւ է քան զամենայն առիւծ և վագր և
քան զամենայն գազան։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Շատ բարձր դարձած ամբոխին.)

Ի՞նչ էք ասում Ի՛չխանք Ազգի և Մերք ժողովրդեան.
ի՞նչ անեմ այս դատերս, որ ինձ անհնազանդ է, և չէ կա-
մենում լսել։

ՄԵՐՈՒՆԻ ՄԻ (Շատ մոտեցած ամբոխի դէմն.)

Մենք ունինք Քրմապետ՝ մեր կամաց թարգման, թող
մեր կողմանէ նա խօսի, մենք ուխտել ենք հնազանդիլ
նորա խօսքին և յօժարիլ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Ի՞նչ ես ասում՝ ՔարՀամ Քրմապետ, ի՞նչ անեմ դքս-
տերս որ ինձ անհնազանդ է։

ՔՐՄԱՊԵՏ

Քո Դուստրն Դշխոյն Սանդուխտ հայհոյութիւն խօսեցաւ
ընդդէմ մեր Աստուածուհւոյն, վասն որոյ և մահապարտ է։
Քո Դուստրն անարգում է մեր Ազգային Կրօնն, վասն որոյ
և մահապարտ է։ Դշխոյն անհաւատարիմ է Ազգային Աւան-
դութեանց, վասն որոյ և մահապարտ է։ Սանդուխտ հա-
կառակ է կամաց Թագաւորին, վասն որոյ և մահապարտ է։
Ապստամբ է և ստամբակ ընդդէմ կամաց Հօր, վասն որոյ
և մահապարտ է։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Դառնացած.)

Լսեցի՞ր՝ Դուստր կամապաշտ՝ քո դատակնիքն. ահա՛
Ազգ քո և Քրմապետն դատապարտեցին զքեզ։ Մինչև այս
կէտ՝ Քրմութիւնն և Խուժանն էին քո դատախազքն. այ-
սուհետև ես եմ քո ոսոխն։ Դու՝ Սա՛նդուխտ՝ անշուշտ կա՛մ
պիտի ընդունիս Աստուածուհւոյ պաշտօնն և աղաղվիս,
կամ պիտի այս ատենի մէջ մեռնիս. ընտրի՛ր երկուսէն
մին, մա՛հ կամ հնազանդութիւն օրինաց։

ՍԱՆԴՈՒԽՏ

Ինչ որ պահանջում ես ինձմէն՝ Հա՛յր իմ Թագաւոր,
այն չէ՛ օրինաց հնազանդութիւն, այլ հոգեկան մահ. ու-
րեմն ինձ ասում ես, ընտրի՛ր այս երկու մահէն՝ մին, կամ
հոգեկան մահ, կամ մարմնական։ Ես ընտրում եմ մար-
մնական մահն։ Լաւ է մեռանիլ և Քրիստոսի հարսնանալ,
քան թէ Աստուածուհի անուն ընծայել ձեր Անահիտին,
որ մարդ անգամ չէ, թող թէ Աստուած։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Բարկանալով.)

Քեզ Նոնուիարայ մաքսուր կաթն չէ՛ սնուցանէ տուել, այլ

Ալանաց անապատի գայլերն են ստինք տուել, այ կամակոր չար դաշան, որ իմ Թագն տղմաթաւալ աղտեղեցիր, քո անառակ վարուք. իմ փառքն՝ յերկնից յերկիր իջուցիր քո խեռ և ստահակ բարուք. չե՛ս արժանի կենաց՝ ա՛տելի։

ՍԱՆԴՈՒԽՏ

Մինչև վերջին շունչս փչելն պարտաւոր եմ քո փրկութեան համար իմ աղաչանքն սփռել այն Ամենակարող Հզօրի առջևն, որ քեզ իւր լոյսն շնորհէ, և քեզ ողորմելով դարձ տայ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Աբհամրհելով.)

Այն լոյսն քեզ համար խնդրէ՝ ո՛վ խաւարեալ մտօք, որ այսօր քո ծնողաց համար յաւիտենական սուգ պիտի թողուս, և քո Ազգի համար՝ յաւէժական թախիծ, և քո Հայրենեաց համար մշտնջենաւոր նախատինք։

ՍԱՆԴՈՒԽՏ

Այդ յաւիտենականութիւնն յոյժ կարճատև կ'լինի՝ Հա՛յրիկ. ծնողացս սուգն և բարեկամիս մորմոքն բնական է, անհրաժեշտ և անժխտելի, որ գուցէ թէ պիտի տևէ մինչ ի դուռն գերեզմանի։ Բայց Ազգն պիտի իմ մահուամբ ընդ փոյթ ցնծայ, և Հայրենիքն՝ իմ արեամբ յաւէժ պանծայ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Այս բաղմութեան մէջ չկայ ոք՝ որ ցնծայ քո մահու համար։ Միայն Քրմապետն է քո արեան ծարաւի։ Եթէ մի անգամ գլուխդ խոնարհեցուցանես Աստուածուհւոյ անդրեայց առջևն՝ նորա ձայնն ևս կ'կտրվի։ Իսկ թէ դարձեալ յանդգնի ճիկ հանել, անշուշտ՝ ինչպէս այս գիշեր խոստացայ, նորա լեղուն ծոծրակէն հանել կուտամ։

ՍԱՆԴՈՒԽՏ

Իմ Գլուխն իմ Անմահ Փեսայն է. և իմ Փեսայն՝ Աստուածորդի Միածին Յիսուսն է, որ երբեմն՝ Հնոյ Ուխտի Տապանակի մէջ Նստած մտաւ Դագոնն չԱստուածի Տանն, և Դագոնայ արձանի գլուխն իւր առջևն այնպէս խոնարհեցոյց, որ այն ձեռագործաց հրաշակերտն որպէս բրտի անօթ Նորա դարշապարաց ներքոյ փշրեալ կործանեցաւ. վասն որոյ իմ գլուխն աւելի դիւրին է տալ հատանել, քան թէ Անահտի պիղծ արձանի առջևն խոնարհեցնել։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Զարթնելով.)

Բերէք՝ Քուրմեր՝ Աստուածուհւոյ Անդրիքն. ահա՛ իմ վերջին հրամանս առ քեզ՝ օկնդուկ. կա՛մ պիտի խոնարհիս Անահտին, կամ իմ ձեռամբ պիտի խողխողվիս։

ՍԱՆԴՈՒԽՏ

Հա՛յրիկ՝ դու մի հարուած միայն պիտի տաս անդարմանելի. իսկ գլուխս դահիճն պիտի հատանէ։ Այդպէս է տնօրինել այն Հզօրն, որ ինձ պարգևել է իւր երանաւէտ Հարսնութեան փառաւորեալ անունն։ (Բերէն Անահտան դրշնոն և կանգնեցին յոտին։)

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Յառաջ մատի՛ր՝ Ամենասիրելի Դստրիկ իմ Սանդուխտ, սփռիէ՛ սրտէս իմ Թախիծն, մերժէ՛ երեսէս ամօթոյ և նախատանաց մէգն և մառախուղն, որ իմ ժողովուրդն միւսանգամ հետս այնպէս հաշտվի, որպէս հաշտ էր յերեկն և յեռանդն, որ ես չլինիմ հաւատադրուժ զաւակի հայր, չկոչվիմ ուրացող դստեր չարաբաստիկ ծնող։

ՍԱՆԴՈՒԽՏ

Ես՝ որ յառաջ մատչիմ այդ անշունչ և անբան արձանի հանդէպ, թէ և ձեռներս ի յետս կապած են, ո՛չ թէ խունկ ծխելոյ կամ երկրպագութիւն մատուցանելոյ աղաղաւ պիտի մերձենամ Նորան, այլ արմնկով յերկիր գլորելոյ և

ընդ գարշապարօքս արկանելոյ և ոտնակոխ անելոյ համար, որովհետև Քրմաց ուսոց վերայ բերվեցաւ, և անպիտան կոճեղ նման դրվեցաւ, և այնքան պիտի մնայ անշարժ՝ մինչև կամ յերկիր կործանեմ, կամ այլ անպատուութեամբ անարգեմ. որովհետև՝ եթէ Քուրմք նորա գլուրեալ տեղէն չկանգնեն, պիտի մնայ անկեալ որպէս դի անկենդան։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Բարձրաձայն՝ դէպի ընդ.)

Հրամայո՛ւմ եմ քեզ՝ դնա՛, և տո՛ւր երկրպագութիւն Աստուածուհւոյն, ապա թէ ո՛չ՝ աստէն իսկ իմ բազկէս կ'մեռնիս։

ՍԱՆԴՈՒԽՏ

Ցօժա՛ր եմ մեռանիլ՝ Հա՛յրիկ, քան այն պատիւն և երկրպագութիւնն որ իմ Միածին Փեսայիս պիտի հատուցանեմ, այդ անարդ անդդայ քարին մատուցանեմ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Ցասմամբ բարձրաձայնել ընդ.)

Դնա՛՝ ասում եմ, ապարասա՛ն զաւակ, կա՛մ կատարէ՛ հրամանս, կամ ես կ'դնեմ վախճան կենաց քոց։

ՍԱՆԴՈՒԽՏ

Վախճան կենացս հասել է՝ Տէ՛ր իմ Արքայ Հայրիկ, և ահա՛ եկել է Փեսայս, կանգնել է Օդոյ մէջ, և ինձ մատնացոյց է լինում դէպ այն անմահութեան Առագաստն՝ ուր հանդերձեալ եմ տօնախմբել այսօր իմ Հարսնութիւնն. լսում եմ և երկնային նուագարանաց երաժշտական ներդաշնակութիւնն և քաղցրաձայնութիւնն. բայց ճանապարհս այնպէս է, որ եթէ կամենամ Փեսայիս Աջէն բուռն հարկանել և Նորա գերկն փարիլ, իմ ոտից պատուանդանն պիտի լինի Անահտական արձանն. և մի գարշապարաւ պիտի անշուշտ կոխեմ Նորա գլուխն, որ միւսովն անցանեմ անապական հարսանեաց յաւիտենականութեան Սեամն։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Սարսափելի հարկանէ ոտով.)

Ա՛ռ քեզ Հարսնութեանդ խիլայն՝ Դո՛ւսար դատապարտեալ։

ՍԱՆԴՈՒԽՏ (Գլուխը՝ կուրծքը.)

Տէր Յիսուս Փեսա՛յ իմ Անմահ, ներեա՛ Հօրս, մխիթարութիւն շնորհեա՛ Մօրս, և ընկա՛լ զհոգի Հարսին Քո։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Զայրոյթն.)

Դահի՛ճ։

(Դահիճն վազէ, լայս ցոլայ է վերայ Դշխոյին և է ձեռ լուսոյն պսակ է ծաղկանց, և վարդոյրն ծածկէ։)

ՎՐԻՊԱԿՔ

				ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
ԷՋ	14	ՏՈՂ	25	առնելով	առնելով
»	15	»	11	դրոշմում	դրոշում
»	17	»	12	միասանգամ	միանգամ
»	31	»	4	սեղանակ Ա	սեղանայն

15655

7013